№ 163 ՈՒՐԲԱԹ, 27 ՅՈՒԼԻՍԻ

1912

ՔԱՌԱՍՈՒՆՄԷԿԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՈՒՐԲԱԹ, 27 ՅՈՒԼԻՍԻ № 163

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը և 7 ամսվանը 6 րուբլի.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.
Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.
Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція „Мшакъ"
Сергіевская ул., № 5
Tiflis, Rédaction „Mschak"
Խմբագրատան տելեֆոն № 2—53.

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—3 (բացի կիրակի և տօն օրերից).
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզվով
Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 20 կոպէկ.
Տպարանի տելեֆոն № 67.

ՄՇԱԿ
ՔԱՌԱՍՈՒՆՄԷԿԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Հասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція „МШАКЪ".
TIFLIS, Rédaction du journal „MSHAK".

ՕԳՈՍՏՈՍԻ 1-ԻՑ ՄԻՆՉԵՒ ՏԱՐՎԱՑ ՎԵՐՋԸ 5 ՌՈՒԲԼԻ.
Օգոստոսի 1-ից մինչև սեպտ. 1-ը 85 կ.
Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել նաև հին հասցէն և 40 կ. նամականիշ. ՀԻՆ ՀԱՍՑԷՆ և 40 կ. չուղարկողների խնդիրները՝ հասցէն փոխելու վերաբերմամբ՝ ԿԸ ԹՈՂՆՎԵՆ ԱՆՀԵՏԵՒԱՆՔ.

Յայտարարութիւնների համար պիտի վճարել. I երեսի վրա իւրաքանչիւր տողատեղին (պետիտ)—20 կ., IV երեսի վրա—10 կոպ.:

Կովկասից դուրս գտնվող անձերի և հիմնարկութիւնների յայտարարութիւնները բացառապէս ընդունվում են՝ Մոսկվայում—Центральная Контора Объявленій Торгов. Дома Л. и Э. Метцль и К°, Мясницкая, д. Сытова, և նրա բաժանմունքներում—Պետերբուրգում՝ Морская, 11, Վարշավայում՝ Маршальковская, 130, Վիլնօյում՝ Большая, 38, Պարիզում՝ 8 Площадь Биржи.

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

ՅՈՎՀԱՆՆԷՍ, ԳՐԻԳՈՐ և ՏԻԳՐԱՆ ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆՆԵՐԸ՝ իրանց ընտանիքներով՝ ցաւօք սրտի յայտնում են ազգականներին և ծանօթներին իրանց թանգագին մօր՝

ՍՕՖԻԱ ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆԻ

մահը, որ տեղի ունեցաւ ամսիս 24-ին: Ամբիծքն այսօր, երեկոյեան ժամը 7-ին, հանգուցեալի բնակարանում (Պեսկօվսկայա և Պանասեվինչա փող. անկիւն, տուն Դանդուրովի): Մարմնի յուղարկաւորութիւնը վաղը, շաբաթ, յուլիսի 28-ին, բնակարանից դէպի Հաւլաբարի ս. Կարապետ եկեղեցին: Թաղումը Խոջիվանքի գերեզմանատանը: 3—2

ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ
„Ս. Մ. ԿԻՐԱԿՈՍԵԱՆ և Բ. Գ. ՕՃԱՆԵԱՆ"
ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԵԱՆ,

որի կանոնադրութիւնը Բարձրագոյնս հաստատված է յունիսի 10-ին 1912 թ., սրանով յայտնում է ի տեղեկութիւն ընդհանուրի, որ Ընկերակցութիւնը յուլիսի 1-ից 1912 թ. ձեռնարկել է իր գործունէութեան 1.200,000 ռուբլի դրամագլխով.

Ընկերակցութեան Վարչութիւնը գտնվում է Վլադիկավկազում:

Վարչութեան դիրէկտորներ ընտրված են՝
ՍԵՐԳԷՅ ՄԱՐԿՕՎԻՉ ԿԻՐԱԿՈՍԵԱՆ, ԻՎԱՆ ԲՕՂԴԱՆՕՎԻՉ ՕՃԱՆԵԱՆ,
ԳՐԻԳՈՐ ԲՕՂԴԱՆՕՎԻՉ ՕՃԱՆԵԱՆ և ԻՎԱՆ ԻԼԻՉ ՎԱՎԻԼՕՎ:

Ընկերակցութիւնը կատարում է մանուֆակտուրային ապրանքների մեծաքանակ ու հատավաճառ առևտուր, և ունի՝

ՄԵԾԱՔԱՆ. ՎԱՃԱՌՔԻ ՊԱՀԵՍՏՆԵՐ
ՎԼԱԴԻԿԱՎԿԱԶՈՒՄ
ԳՐՕԶՆԱՅՈՒՄ
ԳԵՕՐԳԻԵՎՍԿՈՒՄ
ԹԻՖԼԻՍՈՒՄ
ՔՈՒԹԱՅԻՍՈՒՄ
և տօնավաճառներում՝
ԳԵՕՐԳԻԵՎՍԿՈՒՄ
ԳՐՕԶՆԱՅՈՒՄ.

ՀԱՏԱՎԱՃԱՌ ԽԱՆՈՒԹՆԵՐ
ՎԼԱԴԻԿԱՎԿԱԶՈՒՄ
ԳԵՕՐԳԻԵՎՍԿՈՒՄ
ՊԵԱՏԻԳՕՐՍԿՈՒՄ
ԹԻՖԼԻՍՈՒՄ
ՔՈՒԹԱՅԻՍՈՒՄ
ԱՐԴՕՆՍԿԱՅԱ կայար.
ՊՐԱՍԿՕՎԷՅԱ գիւղում:

առ. 524. 10—7

«ՄՇԱԿԻ» ՅՈԲԵԼԵԱՆԱԿԱՆ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ հրատարակութեամբ
Լոյս տեսաւ եւ վաճառվում է
Հ. ԴԱՆԻԷԼԵԱՆԻ կազմած
„ՄՇԱԿԻ" ՔԱՌԱՍՆԱՄԵԱԿ (1872–1912)

Հանդերձ Գր. Արծրունու, Անդր. Արծրունու, Րաֆֆիի, Գ. Սունդուկեանի, Ա. Արփիարեանի, Ե. Տէր-Մարկոսեանի, Ալ. Քալանթարի և Հ. Առաքելեանի պատկերներով:

Գիրքը բաղկացած է 132 էջից, տպված է ամենալաւ թղթի վրա եւ պարունակում է իր մէջ «Մշակի» 40 տարվայ համառօտ պատմութիւնը, բոլոր խոշոր երևոյթների, բելլետրիստ. երկերի, նշանաւոր յօդուածների եւ այդ ժամանակամիջոցում «Մշակի» ունեցած աշխատակիցների եւ թղթակիցների անունների յիշատակութիւնը:

ԳԻՆՆ Է 50 ԿՕՊ.

Պահեստը Թիֆլիսում, «Մշակի» գրասենեակում:
«Մշակի» բաժանորդները ճանապարհածախք չեն վճարում:
ԳՐՔԻ ՎԱՃԱՌՈՒՄԻՑ ՍՏԱՑՎԱԾ ԶՈՒՏ ԱՐԴԻՒՆՔԸ ՅԱՏԿԱՑՎՈՒՄ Է «ՄՇԱԿԻ» ՖՕՆԴԻՆ:

ՊԱՍՏԱՌՆԵՐ
(ОБОИ)
ԵՂԲ. ՏԱՐՆՕՊՕԼ
ՖԱԲՐԻԿԱՅԻ
Բաժանմունքը Թիֆլիսում, Դօլ. պր. 21, տուն Արտիստական Ընկ., տելեֆոն № 355.
Պահեստումս կան մեծ քանակութեամբ ընտիր պաստառներ ամենավերջին ոճով,
ՖԱԲՐԻԿԱՅԻՆ ԻՍԿԱԿԱՆ ԳՆԵՐՈՎ
8 կոպ. սկսած մինչև 6 ր. իւրաքանչիւր րուլօն:
Ունի պահեստներ Ռուսաստանի գլխաւոր քաղաքներում:
ՆՄՈՒՇՆԵՐԸ ՈՒՂԱՐԿՎՈՒՄ ԵՆ ՁՐԻ:
(Ե.ու.) առ. 154. 50—40

ՇՈՒՇԻ

Մատչելի գնով «Թօփխանա» շուկայի մօտ ԾԱԽՎՈՒՄ Է Լեւոն Վարազեանի քարաշէն երկյարկանի ՏՈՒՆԸ:
Գնելու պայմանների մասին դիմել Շուշում Գերասիմ Խուբլարեանին, կամ Վարազեանին՝ Պեատիգօրսկում, նամակով—Провалъ, дача № 13.
(օ.մ.) առ. 499. 15—9

Աստրախանեանի Կենտր.
ԵՐԿՍԵՌ ԴՊՐՈՑԻ ՀԱՄԱՐ ՀԱՐԿԱՒՈՐ ԵՆ
ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐ
1) Բարձրագոյն կրթութեամբ կամ ճեմարանաւարտ՝ հայոց լեզուի, հայոց գրականութեան, եկեղեց. պատմութեան 21 դաս:
2) Բարձրագոյն կրթութեամբ կամ ինստիտուտից՝ ռուսաց լեզուի, հանրահաշւի և երկրաչափութեան 21 դաս:
3) Վարժուհի՝ վերակացութեան, կարուձևի (6 դաս) և թւաբանութեան (3 դ.):
Տեսուչ՝ Յոհան Դաւթեան, ԴԻԼԻՋԱՆ
(ա.օ.) 543. 3—1

ԿՈՎԿԱՍԵԱՆ ՊՈԼԻՏԵԽՆԻԿՈՒՄ

Ուրախութեամբ կը տեղեկանան կովկասցիները, որ կովկասեան պոլիտեխնիկումի ծրագիրը գտել է հաւանութիւն.

Պոլիտեխնիկումի ծախքերի հոգացումը թողնված է կովկասին, որը պէտք է հայթայթէ միջոցներ թէ դըպրոցի շինութեան և թէ նրա պահպանութեան համար:

Անկասկած՝ այդ պայմանը ծանր է, որովհետև բարձրագոյն դպրոց շինելու և պահպանելու համար շատ մեծ գումարներ են պահանջվում, իսկ ներկայումս եղած պատրաստի գումարները բաւական չեն պահանջվող ծախքերի համար:

Բայց կովկասցին չը պէտք է ընկճվի դժուարութիւններից, այլ անմիջապէս պէտք է ձեռնարկի բարձրագոյն դպրոցի դասընթացքների կազմակերպութեանը:

Սկզբում կարելի է չը կառուցանել բոլոր շինութիւնները, այլ միայն այնպիսիները, որոնք անխուսափելի անհրաժեշտութիւններ են, իսկ մնացածները վարձել, մինչև դրամական միջոցները աւելի նպաստաւոր լինեն:

Հանգամանքները ստիպում են փոքր ինչ աւելի մեծ գին նշանակել ուսման թոշակի համար. բայց պէտք է յուսալ, որ մասնաւոր մարդիկ և հիմնարկութիւններ օգնութեան կը գան և կը հաստատեն պոլիտեխնիկումի մէջ յատուկ որդեգրական թոշակներ օժանդակելու չքաւոր և անապահով ուսանողներին:

Առ այժմ թանգ է արձանագրել եղելութի նշանակութիւնը և ողջունել նրան: Հաճելի է մեզ համար տեսնել բարձրագոյն դպրոցի հիմնարկութեան գաղափարը ճանաչված իբրև մի արդիւնարար կուլտուրական գործ մեր երկրի համար:

Բարձրագոյն դպրոցը հասունացած պահանջներից մէկն էր մեր երկրում և դարձել էր հերթական: Բայց նրա հիմնարկութիւնը արգելքների էր հանդիպում, որովհետև մի քանի ատեաններ նպաստաւոր կարծիք չէին յայտնում նրա այժմէականութեան մասին և յետաձգում էին նրա հաստատութեան ժամանակամիջոցը յետագայի համար:

Այժմ, երբ բարձրագոյն դպրոցի հիմնարկութեան խնդիրը դրական որոշում է ստացել, անշուշտ, կաւելանայ և այն նուիրատուութիւնների քանակը, որոնք արվել են և արվում են դպրոցի օգտին: Եւ մենք չենք կասկածում, որ գործի աջող սկզբնաւորութիւնից յետոյ, թէ կովկասեան և թէ հանուր պետական միջոցներն էլ օգնութեան կը գան աւելի կատարեալ և աւելի օգտաւէտ դարձնելու այն կրթարանը, որ կոչված է տալու մեր երկրին լաւ պատրաստված մասնագիտական ույժեր և տեղական գործողներ.

Ա. Քալանթար

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

(Սեփ. հեռագիր)

Մոսկվա, 26 յուլիսի

Վախճանվեց պրոֆեսոր Խախանովը:

Եմ. ք. Նազարեանց

—

«Кавказъ» լրագիրը Պետերբուրգի իր յատուկ թղթակցից ստացել է հետևեալ հեռագիրը.

«Թոյլտուութիւն ստացվեց բանալու Թիֆլիսում պոլիտեխնիկում, այն պայմանով միայն, որ բոլոր ծախքերը հոգացվեն տեղական միջոցներով»:

—

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

25 յուլիսի

Լոնդոն.—Համայնքների պալատ. Պատասխանելով իրան տրված հարցին, Ասկվիտը ասաց. «Եթէ միջազգային զինաթափութեան տակ հասկացվում է ամեն տեսակ զինված ույժերի ոչնչացումը, այդ դէպքում այդպիսի զինաթափութիւնը ես համարում եմ գործնականապէս անիրագործելի: Կառավարութիւնը միշտ պատրաստ է միջազգային քննութեան ենթարկելու սպառազինութեան ծախքերի աճման հարցը»:

—

Տօկիօ.—Կայսրի թաղումը նշանակված է յուլիսի 31-ին (?): Օգոստ. 2-ին հրաւիրվում է պարլամենտի արտակարգ նիստը քննելու թաղման ծախքերի համար գումար յատկացնելու հարցը: Ներումն է շնորհված ցամաքային զօրքի և նաւատորմի դատապարտված պաշտօնեաներին:

—

Մուկդէն.—Ռոճիկները չը վճարելու պատճառով կանոնաւոր ոստիկանական զօրքերում խլրտումներ են երևում նորից: Բաօդինֆուլից շտապով այստեղ ուղարկվեց երկրորդ զօրաբանակի մի մասը: Նահանգապետը արգելեց զինուորներին հեռանալ զօրանոցներից, փակել տուեց թատրոններն ու դպրոցները:

—

Թէհրան.—Կազմված է մի մասնաժողով մինիստրների, հոգևորականութեան ներկայացուցիչների և նոր ռէժիմի մի քանի գործիչների մասնակցութեամբ նոր մէջլիս հրաւիրելու ցանկալիութեան հարցը քննելու համար:

—

Շամախի.—Գիշերվայ ժամը 1-ին երկրաշարժի ցնցումներ զգացվեցին հիւսիսից դէպի հարաւ ստորերկրեայ խուլ ձայներով, որը տևեց 8 վայրկեանի չափ:

—

Լվով.—Լվովի լեհական եպիսկոպոս Սուֆրագան Բանդուրսկին մի կոչ է հրատարակել ուղղված լեհական ժողովրդին, որով առաջարկում է դեսեատինների նուիրաբերութեամբ շտապել ի պաշտպանութիւն Խոլմշչինայի և հրաւէր է կարդում ժողովրդին բոլոր ույժերով դիմադրել ռուսական եկեղեցուն՝ հակադրելով նրան կաթոլիկականը, ռուսաց դպրոցին՝ լեհականը, թէկուզ նոյնիսկ ստիպված լինի թագնվել Խոլմշչինայում գետնափորներում կամ թափառելու անտառներում:

—

Վաշինգտոն.—Ամերիկական ռազմական ույժերը Մանագուայում ուժեղացնելու նպատակով՝ վճռված է Կորինտօյում նորից ցամաք իջեցնել 350 նաւաստիներ:

—

Դիւսսելդորֆ.—Բացվեց բանուորներին խեղանդամութիւնից ապահովագրելու միջազգային երրորդ կոնգրէսը:

—

Չիկագօ.—Ռուզվէլտի կուսակցութեան ազգային կոնվէնտի կողմից ընտրութիւնների ստուգութեանը վերահսկող յանձնաժողովը որոշել է թոյլ չը տալ պատգամաւոր նեգրներին մասնակցելու:

ԹԻՒՐՔԻԱՅԻ ՇՈՒՐՋԸ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

25 յուլիսի

Սօֆիա.—Կ. Պօլսից հաղորդում են, որ սենատի վոտումից յետոյ, որով նա ընդունում էր կառավարութեան ցանկութեան համաձայն կոմիտէտական պալատի գոյութիւնը ապօրէն, մինիստրների խորհուրդը վճռեց անմիջապէս արձակել պալատը: Կայսերական իրադէն արձակման մասին ստորագրվեց գիշերը: Մեծ վէզիրը իրադէի բովանդակութեան մասին տեղեկացրեց պալատի նախագահին, խնդրելով նիստ հրաւիրել յաջորդ օրը ժամը 1-ին հրովարտակը լսելու համար: Կոմիտէտական ֆրակցիայի բիւրօն վճռեց փորձ անել տապալելու կաբինէտը, ուստի նախագահը նիստ հրաւիրեց առաւ. ժամը 9-ին: Պալատը ահագին մեծամասնութեամբ ընդունեց Ջաւիդի առաջարկած անվստահութեան բանաձևը: Պատգամաւորները ցրվեցին: Նախագահը գնաց պալատ նոր կաբինէտի պատրաստի ցուցակը առաջարկելու և տեղեկացրեց պալատի անվստահութեան մասին: Այդ տեղեկութիւնը ստանալով, մեծ վէզիրը չընդունեց նրան և առանց թիկնապահների գնաց պարլամենտը, ուր հրամայեց սուրհանդակին պատգամաւորների զանգը խփել: Դահլիճ հաւաքվեցին պալատի քարտուղարը և 10 պատգամաւորներ: Կոմիտէտական մի քանի պատգամաւորներ խմբվեցին դռների առջև: Մեծ վէզիրը կարդաց պալատը արձակելու ուկազը, որով յայտարարվում էր, որ նոր պալատը կը կազմվի նոր ընտրութեամբ, առանց նշանակելու, սակայն, նրա ժամանակամիջոցը: Դահլիճում եղած պատգամաւորները խլացրին ընթերցումը ծափահարութեամբ. Ապա մեծ վէզիրը գնաց սենատը և այնտեղ էլ կարդաց ուկազը: Այդ միջոցին պալատի դահլիճը մտան նախկին մինիստրներ Թալեաթն ու Ջաւիդը և ապարանքից վերադարձող պարլամենտի նախագահը, որը սուլթանին չէր գտել ապարանքում: Կոմիտէտի ֆրակցիան, բացի մանիֆեստ հրատարակելուց, մտադիր է խորհրդակցութեան գումարվել, որի տեղը գաղտնի է պահվում: Կոմիտէտը յայտարարում է, որ ակտիվ կռիւ է սկսելու կաբինէտի դէմ: Առ այժմ յաղթութիւնը կաբինէտի կողմն է: Կոմիտէտը լուրեր է տարածում, որ մայրաքաղաքի և Ադրիանուպօլսի շրջանի զօրքի կէսը իր կողմն է, բայց Սալոնիկի զօրքերը կաբինէտի կողմն են: Ամենայն դէպս պէտք է կարծել, որ կառավարութեան յաղթութիւնը դէպի իրան կը քաշի նրանց, որոնք անվճռական դիրք են բռնել: Առաւօտեան, պալատի նիստի ժամանակ, եկան ծովային չորս օֆիցերներ և յայտնեցին, որ ամբողջ նաւատորմը պալատի կոչին պատրաստ է հանդէս գալու և պաշտպանելու սահմանադրութիւնը:

—

Սօֆիա.—Կ. Պօլսից հաղորդում են վերջին դէպքերի մանրամասնութիւնները: Սենատի տուած բացատրութիւնից յետոյ, պալատի նախկին նախագահը կիրակի օր երեկոյեան ուշ գիշերը գնացել է համոզելու սուլթանին, որպէսզի նա չը ստորագրի պալատը արձակելու ուկազը: Սուլթանը պատասխանեց, որ ուկազը ստորագրված է արդէն, և խորհուրդ տուեց Խալիլին լինել զիջող և կորեկտ: Արձակման արարողութիւնից յետոյ, վէզիրի և սենատի նախագահի հրամանով, պալատի նիստերի և բիւրօյի դահլիճները փակվեցին, իսկ բանալիները յանձնվեցին պրեզիդիումի քարտուղարին պահելու: Վերջինս տարաւ յանձնեց նրան Խալիլին, որը, վերադարձնելով քարտուղարին, ասաց. «Պահեցէք նրանց, ձեզ պահ է տալիս պալատի նախագահը»: Նախկին պատգամաւորներին արգելված է մտնել պարլամենտի շինութեան մէջ: Կոմիտէտական ֆրակցիայի խոստացած մանիֆեստը դեռ ևս չէ հրատարակվել, որովհետև նիստ գումարելու տեղ դեռ չեն գտել: Նախկին դիտաւորութիւնը՝ շարունակել արձակված պալատի նիստը, ըստ երևոյթին, թողնված է, որովհետև նոյնիսկ Սալոնիկը, կոմիտէտի գլխաւոր այդ կենտրոնը, այժմ դուրս է գալիս անյուսալի: Խաղաղասիրութեամբ տոգորված պատգամաւորները ցրվում են իրանց տեղերը: Փողոցում բացարձակ ընդհարումներ սկսելու երկիւղը առայժմ վերացած պիտի համարել՝ շնորհիւ կառավարութեան ձեռք առած վճռական միջոցների:

—

Ցէտինիէ.—Ի նկատի առնելով այն, որ Չեռնոգորիան չը կատարեց Թիւրքաց դեսպանի պահանջը՝ Մալկօվացի մօտ պատահած դէպքի առիթով ցաւակցութիւն արտայայտելու մասին, դեսպանը, համաձայն իր ուլտիմատումի, գրաւոր կերպով յայտնեց չեռնոգորական կառավարութեանը, որ այսօրվանից Թիւրքիան այլ ևս դիպլոմատիական ներկայացուցիչ չի ունենայ Ցետինիէում: Թիւրքաց դեսպանը հեռանում է այստեղից յուլիսի 26-ին.

—

Բէլգրադ.—«Պոլիտիկա» լրագիրը կըշտամբելով կառավարութեանը ալբանական հարցի նկատմամբ անտարբեր լինելու համար, գտնում է, որ Սերբիան պարտաւոր է թոյլ չը տալ, որպէսզի առանց իր մասնակցութեան որևէ փոփոխութիւն կատարվի Բալկանների վրա status quo-ի վերաբերմամբ:

Ուստի խորհուրդ է տալիս ուժեղացնել զօրքերը թիւրքական սահմանագլխի մօտ անկնկալ հիւրերի առաջն առնելու համար, մանաւանդ որ Աւստրիան այդ բանը արել է արդէն Հերցեգովինայի սահմանի վրա:

—

Պրիզրէն.—Վելիկավօ գիւղի մօտիկ ընդհարում պատահեց թիւրքերը և չեռնոգորցիների միջև: Չեռնոգորցիները գրաւեցին մի քանի պահակակէտեր և մի քանի հարիւր հրացաններ: Թիւրքերը դէպքի տեղը ուղարկեցին տասը գնդակացիրներ:

—

Ուսկիւբ.—Քրիստոնեայ ազգաբնակութեան տրամադրութիւնը քաղաքի շրջակայքում ճնշված է Կաչանիկի ջարդից յետոյ: Պարզված է, որ սպանված են 100-ից աւելի և վիրաւորված 400-ից աւելի:

ԿԻԼԻԿԻՈՅ ՎԵՀ. ՀԱՅՐԱՊԵՏԻՆ ՀՈՎՈՒԱԿԱՆ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆԸ Ի ՀԱՃԸՆ ԵՒ ԶԷՅԹՈՒՆ

Հաճըն, 2/15 յուլիս

Կաթողիկոսական աթոռներն հայ անցեալ փառաց սրբազան աւանդներն են և անոնց գահակալները՝ նախնի քաղցր և ամենաթանկագին յիշատակներու աւ անդրնկալ սրբազան հայրեր, իրենց վեհութիւնը մեզ նուիրական և պատկառելի, տառապեալ հայութեան պահապան հրեշտակները։ Լսել կաթողիկոսական սփոփարար ձայնը և ունկնդրել հայրական խրատները՝ ունին իրենց գերակշիռ նշանակութիւնը հայ ժողովուրդին համար։

Վեհափառ Կիլիկիոյ, Սահակ Բ. հայրապետին ի Հաճըն և Զէյթուն այցը՝ լեռնական այս թշուառ, հալածեալ, անտէր ժողովուրդին ամենամեծ սփոփանք ու մխիթարութիւն մը եղաւ։

Կիլիկիոյ աղէտալի դէպքէն վերջ, առենէ մը ի վեր չահամոլ, կաշառակեր պաշտօնեաներու նպատակաւոր և չափազանցեալ յերիւրանքները ստիպեցին նորին վեհափառութեան՝ հակառակ իր յառաջացեալ տարիքին և ծանրագրաղ վիճակին՝ իր սիրեցեալ ժողովուրդին մօտ ապրել ժամանակ մը, լսել և մեղմել անոր ցաւերը։

Կաթողիկոսական երջանկայիշ այցը անհուն ուրախութեամբ համակեց ինչպէս Հաճընոյ, նոյնպէս և Զէյթունի համայն հայութեան սրտերը։

Նորին վեհափառութեան ընդունելութեան համար ամենամեծ պատրաստութիւններ եղան ի Հաճըն։ Բացի կաթ. տեղապահէն և պաշտօնական մարմիններէ հարիւրաւոր ձիաւորներ, հազարաւոր բազմութիւն գացին ընդ առաջ. Միացեալի Հաճընոյ վարժարանի ֆութ-բոլի խումբը տարազաւոր և դրօշակակիր ընկերացած էր անոնց։ Վեհն ահա կուգայ. Միացեալի սաները բարի գալուստի յաղթական կամարին շուրջ, ձիթենեաց տերևներ ի ձեռին, ձօներգներ կերգեն. կը մօտենայ վեհ. հայրապետը իր շքախումբով ծովածաւալ բազմութեան մէջ։ Հարիւրաւոր զինուորներ և ոստիկաններ օֆիցէրներու առաջնորդութեամբ, քաղ. պաշտօնեաներ տեղակալին առաջնորդութեամբ, Հաճընի ազգ. վարժարանի սաները սպիտակազգեստ երգերով, մանկապարտէզի մանկունք ծաղկափունջերով բարի գալուստ կը մաղթեն նորին վեհափառութեան։

Եկեղեցւոյ զանգակները կը հնչեն, մեծ ու փոքր, ամբողջ քաղաքը կը ցնծայ։ «Կեցցէ վեհ. հայրապետը» ուրախութեան աղաղակներ կը թնդացնեն երկինքը։ Փողոցները անանցանելի, իսկ տանիքները անտեսանելի են դարձած բազմութենէն։ Քաղաքին ամբողջ կղերականութիւնը և երգեցիկ խումբը «Հրաշափառով» կառաջնորդեն վեհափառը ս. Թորոսայ եկեղեցին, ուր վեհ. հայրապետը կուտայ իր հայրական օրհնութիւնը և կը հիւրընկալուի առաջնորդարանը։

Յաջորդ առաւօտուն վեհափառը կը պատուէ Միացեալի կեդր. վարժարանին շրջանաւարտից քննութիւնը և աշակերտաց յառաջդիմութեան առթիւ իր անհուն գոհունակութիւնը յայտնելով Միացեալի փըրկարար դերին համար՝ կօրհնէ հիմնադիրները և վարիչները։

Շաբաթ մը տեղս մնաց վեհ. հայրապետը, մի առ մի այցելեց բոլոր հաստատութիւնները, քարոզեց ս. Գէորգ եկեղեցին, յորդորեց ժողովուրդը ընթանալ ճշմարտութեան ճանապարհէն, չհեռանալ արդարութենէն, չանսալ մոլորիչներու և չթերանալ իրենց ազգ. պարտականութեանց մէջ։ Վերջապէս առանց անմասն թողելու Միացեալի շրջանաւարտից և Ազգ.-ի տարեկան հանդէսները՝ մեկնեցաւ դէպի Զէյթուն։

Նորին Վեհափառութեանն ընկերանալու պատիւը կունենանք։

Կանուխ է, արշալոյսէն շատ առաջ. զով և մեղմ օդով կը բարձրանանք և կը բարձրանանք ապառաժոտ լերանց կողքին, անցնելով կոյս անտառներէ, գեղեցիկ մարգագետիններէ, ամայի սարաւանդներէ, մինչև Խանզէր, այդ անուանի խորխորատը, որուն գահավէժ բարձունքէն նեղ և մոլեգնող արահետներէ կիջնենք ճիշդ ժամ մը՝ յետոյ բարձրանալու համար, անցնելով խարխուլ կամուրջէ մը, զոր կառավարութիւնը շինել տուած է, նախապէս բարեսէրի մը շինած ամրաշէն և քարուկիր կամուրջը փլցնելէ վերջ, Հաճընոյ և Զէյթունի յարաբերութիւնք խզելու կանխազգուշութեամբ։

Ցորեկ է. Ոսկեհրանի փառաւոր ճգնաւորանէն անցնելով ջրառատ և հովասուն վայր մը, ապառաժ լերան մը հովանիին տակ, կիջնանինք։ Կոկիսոնցիք մեծ պատրաստութիւններով եկած են։ Ապշեցուցիչ բազմութիւն մը կը հաւաքուի հետզհետէ։ Ճաշէն վերջ չորս ժամ տևող տեղատարափ անձրևով մը կը հասնինք Կոկիսոն, ուր յոգնաբեկ զէյթունցիք տեղական ցուրտին և անձրևին տակ կը սպասէին նորին վեհափառութեան եկեղեցի առաջնորդելու։ Յաջորդ օրը արևածագին կը մեկնինք։ Իշխանազուն Սուրէնեան և Ենի.-Տիւնեաեան պայազատք, իրենց ոսկեճամուկ զգեստներով, համակ զինեալ կառաջնորդեն զէյթունցի զինակիր քաջերը։ Հարիւրաւոր ձիաւորներ ի պատիւ վեհին Կոկիսոնի անծայրածիր դաշտին մէջ ձիարշաւներ կընեն, մինչ հետզհետէ հասնող զէյթունցիք հրացանաձգութիւններով վեհութիւն մը կուտան շքախումբին։

Ցորեկին կը հիւրընկալուինք Պալենց գիւղացիներէն։ Վարդապետներ, քահանաներ, իշխանազուններ և գիւղացիներ հասարակաց սեղանին շուրջ բոլորած խառն կերգեն հայուն ցաւէն ու անցեալէն։ Երջանիկ է նորին վեհափառութիւնն տեսնելով այդ թշուառ ժողովուրդին ուրախ վայրկեանները։

Ժամը 3.-ին ձիերը կազմ ու պատրաստ կը շարունակենք մեր վարէջքներն և վերելքները. կանցնինք գետերէ, ձորերէ, բուրումնաւէտ հովիտներէ, մայրի անտառներէ և կը մագլցինք Քուչակ-Սէօքէնի՝ Խանզէրէն աւելի սարսափելի և ահարկու սեպաձև բարձունքն ի վեր, անդնդասահ ժայռուտներէ, խաբուսիկ արահետներէ։ Այսպէս յաջորդաբար լեռնէ-լեռ անցնելով կը հասնինք Ալաչայիրի ջրառատ հովիտը, ծիրանապատ լեռներով շրջապատուած բանաստեղծական հնաշխարհիկ վայրը։ Հոս կը գիշերենք։ Առաւօտ է. արեգական առաջին ճառագայթները գիշերուան ցողին մէջ կը ցոլան։ Ճամբայ կելլենք. հետևորդները ժամ առ ժամ կը շատնան, կը բազմապատկուին, քանի կը մօտենանք Զէյթունին, անցնելով ապառաժ լերանց ստորոտէն, Սիհունի եզերքէն։

Հարիւրաւոր, հազարաւոր հրացաններ միահամուռ կը թնդացնեն երկինքը։ Ամբողջ Զէյթուն թևաւորուած է. քաղաքը գրեթէ ամայացաւ. չկայ ճամբայ, ոչ ալ անցք. հազիւ քառորդ ժամուն տեղը մէկ և կէս ժամէն կը կտրենք... Ի՜նչ յուզիչ է տեսարանը... Թշուառութեան, խեղճութեան և անգութ պաշտօնեաներու ճիրաններուն տակ տառապող ժողովուրդը նորին վեհափառութեան փրկարար այցելութենէն խելակորոյս՝ ուրախութեան արցունքներ կը թափէ։ Միացեալի ուսանողները խումբ-խումբ ձօներգներ կերգեն և ուղերձներ կը կարդան։ Եկեղեցւոյ զանգակները կը հնչեն անդադար, մինչ վեհը կառաջնորդուի ս. Աստուածածնայ եկեղեցին, համակ լուսազարդուած, ուր վեհ. հայրապետը թէև կը փափաքի խօսիլ, բայց ճանապարհին յոգնութիւնը կը ստիպէ վեհը՝ գոհանալ հայրական օրհնութեամբ։ Կը մեկնի դէպի վանք։

Կը ցաւինք հոս յիշեցնել, թէ քաղաքային և զինուորական պաշտօնեաներէն ոչ ոք, նոյնիսկ քայմաքամը, ոչ իսկ անզորրութեան պաշտօնեայ մը ներկայ էր, հակառակ բարձրագոյն հրամանին։ Տեղականին սոյն անքաղաքագէտ ժխտոն յոյժ վիրաւորեց Զէյթունի քաջարանց ժողովուրդին ազգասիրութիւնը. ամենածանր նախատինքն էր, որ կուգար բարձրագոյն իշխանութենէն դէպի իր ամենասիրելի հայրապետը, առիթ տալով ամենաարդարացի դժգոհութեան։ Մինչդեռ կառավարութեան կողմէ կաթողիկոսավայել հիւրընկալութիւն մը խոր տպաւորութիւն մը պիտի թողուր օսմ. գահուն ամենահաւատարիմ այդ ժողովուրդին և պիտի դիւրացնէր թէ վեհ. հայրապետին և թէ տէրութեան գործը փոխադարձաբար։

Լ—Ժ.

ՆՈՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԸՆԹԵՐՑՈՂԻ ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆԻՑ

XV

Վերջին տարիներս ինքնասպանութիւնները մի տեսակ համաճարակի տեսք են ստացել ամբողջ Ռուսաստանում։

Օր չէ անցնում, որ ձեռքդ առնելով մի որևէ թերթ՝ չը կարդաս այս կամ այն ինքնասպանութեան մասին, շատ անգամ միևնոյն քաղաքում մի քանի հատ։

Եւ այդ համաճարակը օր-օրի վրա աւելի լայն ծաւալ է ստանում և ընդգրկում հասարակութեան բոլոր խաւերը։

Ինքնասպանութեան են դիմում հարուստ ու աղքատ, ծեր և երիտասարդ, կին և տղամարդ, պատանի ու աղջիկ։

Կեանքի մէջ մի փոքրիկ անաջողութիւն, որևէ, շատ անգամ նոյնիսկ աննշան, դէպք, և ահա պատրաստ է ատրճանակի գնդակը։

Ինքնասպանութիւնների այդ սոսկալի կօշմարը գրկել է իր խեղդող ճիրանների մէջ ամբողջ Ռուսաստանը։

Ի՞նչ է պատճառը։

Ինչու են մարդիկ կեանքի բոլոր խոչընդոտների դէմ այդ միակ զէնքը գործ ածում։

Եւ միթէ ամեն չարիքներից փրկվելու միակ ելքը ատրճանակի այդ փոքրիկ, չարաճճի գնդակն է։

Աշխարհիս ամենասոսկալի հիւանդութիւններն ու ախտերը վարակման միջոցով են տարածվում և հունձ անում մարդկութեան շարքերում։

Խոլերան ու ժանտախտը, թոքախտն ու սիֆիլիսն այնքան բազմաթիւ զոհեր տանել չէին կարող, եթէ միայն նրանք վարակիչ չը լինէին։

Ինքնասպանութիւնն էլ մի տեսակ վարակիչ ախտ է դարձել և շատ անգամ աւելի ճիշդն ասած՝ նրանց 99% կայանում է բոպէի ազդեցութեան տակ, ուրիշների օրինակին հետևելով։

Այդ փաստ է, մի փաստ, որը ոչ ոք հերքել չէ կարող։

Վերցրէք հենց այն հասարակ փաստը, որ համարեա թէ բոլոր ինքնասպանութիւն գործողներն էլ, վերջին բոպէին, երբ մահվան հրեշտակը կանգնած է լինում նրանց հանգչող աչքերի առաջ, խնդրում, աղաչում են իրանց շրջապատողներին, որ փրկեն իրանց։

Ի՞նչ է ապացուցանում այս։

Այն, որ նրանք ինքնասպանութիւն են գործել առանց իրանց հաշիւ տալու, բոպէի, մոմենտի ազդեցութեան տակ և յետոյ իրանք էլ փոշմանել։

Եւ մի անգամ մահվան ճիրաններից ազատվողը այնուհետև երբէք և ոչ մի դէպքում ինքնասպանութեան չէ դիմում։

Ինքնասպանութիւնը մի համաճարակ, վարակիչ հիւանդութիւն է, որի դէմ պէտք է կռուել, յամառ կերպով կռուել ամեն տեսակ զէնքերով, պէտք է նրա առաջն առնել։

Մարդկութիւնը պէտք է սովորի, պէտք է հասկանայ, որ նրա գոյութեան խնդիրն ու նպատակը պատահական դէպքերը չեն, որ մարդկային կեանքի լծակը բոպէական զգացմունքները չեն, այլ կայ մի աւելի բարձր, աւելի վեհ նպատակ։

Եւ այդ նպատակն էլ պէտք է մեր գոյութեան խթանը լինի։

Պէտք է հասկանալ, որ մենք աշխարհ չենք եկել միայն մեր անձնական, եսական նպատակների համար, և երբ այդ նպատակներին հասնել չենք կարողանում, պէտք է վերջ տանք մեր կեանքին։

Ոչ, մեր անձնական կեանքը մի հիւլէ է ընդհանուր մարդկութեան կեանքի մէջ, ջրի մի չնչին, աննշան կաթիլ հսկայ ովկիանոսի մէջ, որը պէտք է ապրէ՝ ովկիանոսին կեանք տալու, նրա գոյութիւնը պահպանելու։

Եւ ահա այդ միջոցով մարդկութիւնը կարող է միայն ազատվել այն սոսկալի կօշմարից, որի անունն է՝

«Ինքնասպանութիւն»։

Բայց արդեօք երբ կը լինի այդ։

Վ. Թումանեան

Բագու

ՄԻ ՓՈՔՐԻԿ ԴԻՏՈՂՈՒԹԻՒՆ

Ո՞վ է գաւառական թատրոնի անկման պատճառը մեզանում։

Այս հարցի պատասխանը երկար չէ, գոնէ ինձ համար։

Ոչ ոք չէ կարող ժխտել, որ ներկայումս գաւառական հայ թատրոնը սուր ճգնաժամի մէջ է, հայ հասարակութեան նոյն իսկ գիտակից մասը անտարբեր, սառն է դէպի հայ թատրոնը և մեր գաւառական կեանքում նոյն իսկ նոր շնորհալի դերասան-դերասանուհիները շարունակ մաշվում են անաջողութեան։ Եւ այդ բոլորի պատճառներից մէկը, գուցէ և գլխաւորը, մեր չակերտաւոր և պատենտաւոր դերասանների անվերջ շահատակութիւններն են։

Ես այդ բանում, դժբաղդաբար, կրկին միացի իմ նախկին համոզմանը, շնորհիւ մեզանում վերջերս տրված մի ներկայացման, ուր գաւառական բազմաչարչար թատրոնը ստացաւ դարձեալ մի ծանր, մահացու հարուած և այն էլ՝ գիտէք ում շնորհիւ. մի դերասանի, որը 30 տարի շարունակ նուիրվել է հայ բեմին, եղել է նրա հաւատարիմ զինակիցը, ժամանակցել է նրա ուրախութեան և վշտին։

Գաւառական թատրոնի խոշոր նշանակութիւնը նսեմացնել, գեղարուեստը այլանդակել, ցեխի հետ հաւասարեցնել և այդպիսով խանգարել ժողովրդի վերածնութեան կուլտուրական գործօններից մէկի կանոնաւոր զարգացումը յանուն մասնաւոր շահերի, անկուշտ ստամոքսի... ծանր, աններելի յանցանք է, մանաւանդ այն մարդկանց կողմից, որոնք «դերասան» անունն են կրում, թատրոնական ասպարէզում համեստ գործունէութիւն են ցոյց տուել։

Մեծ-Ղարաքիլիսա Մ. Գ.

ԳՈՐԾԱԿԱՏԱՐՆԵՐԻ ՀԱՆԳՍՏՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Թիֆլիսի քաղ. դումայի մշակած և նահանգապետի հաստատած՝ գործակատարների հանգստութեան կանոնադրութիւնն սկզբունքային նշանակութիւն ունի։

Վաղուց, շատ վաղուց խօսվում էր գործակատարների հանգստութեան մասին, բայց զանազան աննպաստ հանգամանքների պատճառով մինչև օրս չէր ստանում դրական լուծում։ Ճիշդ է, 1906 թ. ծառայողները ձեռք բերեցին որոշ արտօնութիւններ, սակայն նրանք չունենալով լէգալ հիմք՝ չքացան, անյայտացան, մնալով անգործադրելի։ Տիրեց նախկին րէժիմը։

Եւ ահա Թիֆլիսի քաղ. դումայի նոր կանոնադրութիւնը մեծ փոփոխութիւն է մտցնում կեանքում։ Նա սահմանում է ծառայութեան ժամանակամիջոց 11 ժամ, ուրից դուրս գալով 2 ժամ ճաշի համար, մընում է 9 ժամ զուտ ծառայութեան։ Կանոնադրութիւնը պահանջում է, որ 17 տարեկանից պակաս ծառայողներն օրական 3 ժամ ժամանակ ունենան դպրոց յաճախելու։

Թիֆլիսի դումայի մշակած այս կանոնադրութիւնը, անշուշտ, չէ կարող լինել դեռ ևս կատարեալ և բարեփոխութիւնների կենթարկվի, բայց փորձը ինքն ըստ ինքեան արժանի է ուշադրութեան։

Թիֆլիսից պէտք է օրինակ առնեն գաւառական քաղաքները։ Գաւառական գործակատարների վիճակն աւելի վատ է Թիֆլիսի գործակատարներից։ Գաւառական գործակատարը խանութ է գնում առաւօտեան ժամը 5-ին և տուն է վերադառնում երեկոյեան ժ. 11-ին։ Բանելով խանութում օրական 18 ժամ, նա մաշում է իր առողջութիւնը, դառնում է մի աւտոմատ։ Նա գալիս է տուն և ուժասպառ լինելով՝ իսկոյն քնում։ Նա ժամանակ չունի ոչ ընտանիքի հետ խօսելու, ոչ զբօսնելու և ոչ կարդալու։ Տանը քնել, իսկ խանութում բանել—ահա նրա միակ գործը...

Ասում ենք՝ «ժողովրդին լուսաւորենք», բայց լուսաւորութիւնը միթէ երկնքից կիջնէ։ Ո՞րտեղից լուսաւորութիւն ստանայ գործակատարը, որ օրական գոնէ մէկ ժամ ազատութիւն չունի։ Եթէ խանութում նա գիրք կամ լրագիր վերցնէ կարդալու, խազէինը նրան «կնծին տալով» դուրս կանէ։ Եւ հետևանքը լինում է այն, որ առաջ է գալիս մի դասակարգ, բարոյապէս և ֆիզիկապէս այլասերված, ապուշ, անզարգացած, որի հոգացողութիւնն է միայն՝ մտածել իր խազէինի գրպանը հարստացնելու մասին...

Մեր վաճառականը, լինելով տգէտ, հասկացողութիւն չունի եւրոպական վաճառա-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՂԱՐԱԲԱՂԻ ԹԵՄԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ՅՈԲԵԼԵԱՆԻ ՇՈՒՐՋԸ

III *)

Բաղդասար միտրոպոլիտ Հասան-Ջալալեանցը Գանձասար վանքից տեղափոխվելով իր առաջնորդանիստ Շուշի քաղաքը՝ առաջին հոգացողութեան առարկայ է դարձնում թեմի համար մի դպրոց բանալը։ Այժմեան պոստ-հեռագրատան գրասենեակի շինութեան տեղը, որ այժմ պատկանում է Թադէոսեանցներին, կար երկյարկանի մի շինութիւն, առաջին անգամ, 1837 թւին, դպրոցը բացվել է այնտեղ։ Երբ նկատվել է այդ տեղը անյարմար, դպրոցը տեղափոխել են Անանեանցների՝ Թօփխանայի առաջին գտնվող տունը, որ յետոյ անցաւ Միքէլխանի ձեռքը։ Այդտեղից դպրոցը տեղափոխել են Ագուլեաց մայր եկեղեցու մօտ Դաւիթ Սափարեանցի տունը, իսկ այնտեղից էլ առաջնորդական տունը։ 1898 թ., երբ կառուցվեց Խանդամիրեանցի նուիրած գումարով թեմական դպրոցի նոր շինութիւնը, դպրոցը տեղափոխվեց այնտեղ, իսկ հին շինութեան մէջ տեղաւորվեց օրիորդաց Մարիամեան դպրոցը։

Թեմական դպրոցը պաշտօնապէս բացված է յայտարարվել միայն 1860 թւին։ Այդ թւում էլ Մատթէոս ամենայն հայոց կաթողիկոսը 15 յունիսի № 321 կոնդակով հաստատում է դպրոցի հոգաբարձական առաջին կազմը։ 1837 թւից սկսած մինչև 1860 թիւը, 23 տարի շարունակ, դպրոցը կառավարվել է առաջնորդների անմիջական հսկողութիւնով, նախ Բաղդասար միտրոպոլիտի, ապա Գէորգ եպիսկոպոս Վեհապետեանի, Աբէլ, Մկրտիչ Բաբամեան և այլ եպիսկոպոսների ձեռքով։ 23 տարվայ շրջանում դպրոցը քանի-քանի անգամ փակվել է՝ աշակերտ և նիւթական միջոցներ չունենալու պատճառով, ապա նորից վերաբացվել։ Այդ ժամանակներում Շուշում բացված էր նաև քաղաքային դպրոց, որ կոչվում էր գաւառական ուսումնարան։ Այդ դպրոցը թէև նիւթապէս ապահովված էր, սակայն սա էլ ենթարկված էր գրեթէ փակվելու ճգնաժամին՝ աշակերտ չունենալու պատճառով։ Թուրք ազգաբնակութիւնը բնաւին աշակերտ չէր տալիս, հայերն էլ դժուարութիւնով էին տալիս, առարկելով որ իրանց որդիքը կը ռուսանան։ Մինչ այժմ այդ դպրոցը լցված է հայ աշակերտներով, և ամեն մի հայ գլուխ կոտրելով է իր որդին մտցնում այդ դպրոցը, այն ժամանակ ոչ ոք չէր վստահանում իր որդին տալ ուսում, գիտութիւն սովորելու. մեղաւորը ոչ թէ ուսանալու խնդիրն էր, այլ ժամանակը։

Աշակերտներ չունէր ոչ թեմական նորաբաց դպրոցը և ոչ գաւառական ուսումնարանը. ուսուցիչները չէին կարողանում ժողովրդին ազդել իրանց որդիքը ուսման տալու, իսկ այն ժամանակվայ Կովկասի փոխարքան իր հաղորդագրութիւններով շարունակ խընդրում էր Բաղդասար միտրոպոլիտին՝ յորդորել հայերին, իրանց որդոցը տալու յիշված ուսումնարանը։ Արհին միտրոպոլիտը ճարահատված յորդորում էր աշխարհականներին իրանց որդոցը տալու ուսումնարան, իսկ հոգևորականներին թեմական հոգևոր դպրոցը։ Թեմի հոգևորականները թէև թարմ տպաւորութեան տակ իրանց որդոցը բերում էին քաղաք և յանձնում դպրոցին, բայց առ ժամանակից յետոյ հանում էին և տանում գիւղերը, առարկելով, որ միջոց և յարմարութիւն չունեն քաղաքում որդի պահելու, մինչև այն աստիճան, որ արհի Բաղդասարը հարկադրված էր լինում տալ նրանց և բնակարան, և՛ հագուստ։ Այսպիսի ծանր պայմանների մէջ Ղարաբաղի թեմական դպրոցը իր գոյութիւնը պահպանել է մինչև 1860 թիւը։

Որովհետև դպրոցը պաշտօնապէս յայտարարվել է բացված այդ թւից, ուստի աւելորդ չենք համարում նրա հոգաբարձական առաջին կազմի հաստատութեան կոնդակը առաջ բերել այստեղ։

«Մատթէոս եպիսկոպոսապետ և կաթողիկոս ամենայն հայոց ՌՅԷ 1858։

«Մատթէոս ծառայ Քրիստոսի և անհասանելի կամօքն Աստուծոյ եպիսկոպոսապետ և կաթողիկոս ամենայն հայոց, ծայրագոյն պատրիարք համազգական նախամեծար Աթոռոյ Արարատեան Առաքելական Մայր-Եկեղեցւոյ Կաթուղիկէ Էջմիածնի. Ամենասիրելի հասարակութեան հայոց Շուշւոյ քրիստոսական բազմապատիկ օրհնութեամբ ծանուցանեմք. զի զխնդիր ձեր գրեալ առ մեզ ի 28 մայիսի ի մասին հաստատութեան հոգաբարձուաց հոգևոր դպրոցին Շուշւոյ ընտրելոց ի ձէնջ ըստ զօրութեան կոնդակի մերոյ տուելոյ ձեզ ի 4 դեկտեմբերի անցեալ 1859 ամի ընդ համարաւ 284, յաղագս ճոխացուցանելոյ զհոգևոր դպրոցն ձեր ըստ կարգադրութեան Ներսիսեան ուսումնարանին, որ ի Տփխիս, ի 11 ամսոյ ընկալաք ընդ երկուց սիրելի զաւակացն մերոց և հաւատարիմ պատգամաւորաց տեղւոյդ հասարակութեան պարոն Բաբայի Բէկլարեանց և պարոն Գէորգայ Ամբրումեանց. ընկալաք այս և բերկրեցաք ի հոգի, գովեցաք զձեր ազգապայծառ հեռատեսութիւն, գովեցաք զձեր ազգասիրական եռանդն։ Մաղթանս, այո, աղօթս և խնդրուածս վերախնկեցաք ի բարձունս յաթոռ Աստուածութեան յաղագս հաստատուն և անփոփոխ պահպանելոյ զձեզ յայսմ և ի սոյն օրինակ եռանդեան ազգասիրութեան ի փառս վերնախնամ տեսչութեան և յօգուտ ազգիս և հայրենի Եկեղեցւոյս Հայաստանեայց։

«Ուրախութեամբ ոգւոյ աւասիկ զընտրեալն ի ձէնջ ի 24 յունվարի այսր 1860 ամի ի ներկայութեան առաքեցելոյն ի մէնջ այդր Դանիէլ վարդապետի Շահնազարեանց յառաջնորդական տանն զհինգ անձինս վկայեալս ի ձէնջ արժանաւոր հանգամանօք ուսումնասիրութեան և ազգասիրութեան, որք են Աբրահամ բէկն Մատաթեանց, Համբարձում աղայն Հախումեանց, պարոն Աբրահամն Խանդամիրեանց, պարոն Սարգիս Մատաթեանց և նուխաքաղաքացի գերազնիւ Յովհաննէս բէկն Ելչիբէկեանց առանձին կոնդակաւ մեր հաստատեցաք հոգաբարձու հոգևոր դպրոցին Շուշւոյ, յորում ունին ուսանել որդիք հոգևորականաց և ժողովրդականաց թեմին Ղարաբաղու, և զհինգ անձինս փոխանորդ նոցա։ Եւ համաձայն խնդրանաց հասարակութեանդ ի վերայ արդէն բացեալ բազմատեսակ աղբերաց և հաստատել յառաջագոյն ի կոնսիստորիայէն ցուցակաւ յօգուտ հոգևոր դպրոցին Շուշւոյ՝ յաւելաք յայնս և զպնակագրամ արդիւնս և զարդիւնս կրպակաց մոմավաճառութեանց բոլոր թեմի Ղարաբաղու, և տուաք նոցա զհրաւունս արդէն իսկ մշտնջենաւորապէս ընկալնուլ զայնս ի տեսչութիւն իւրեանց։ Հրամանագրեցաք և կոնսիստորիային հայոց Ղարաբաղու յանձնել զայնսիկ աղբիւրս արդեանց ի ձեռն հոգաբարձուաց, և պարտաւորեցաք զնոյն ատեանն յամենայն դէպս չարգելուլ զօժանդակութիւն իւր հոգաբարձուաց հոգևոր դպրոցին, թէ ի մասին ժողովման արդեանց և թէ յայլ ինչ յայս վերաբերեալ ձեռնարկս նոցին։

«Այսու մերով Քահանայապետական կոնդակաւ աններկրայ յուսադրեմք զսիրելի հասարակութեանդ, թէ՝ ոչ անագան հանդերձեալ եմք առաքել ի վիճակն Ղարաբաղու զթեմակալ առաջնորդ եպիսկոպոս և նա խորհրդակցութեամբ ընդ հոգաբարձուացն ունի զպակասորդացն հոգալ և մերս առաջարկել տնօրէնութեան, զոր և մեք խոստանամք հաստատել ի պայծառութիւն և ի ճոխութիւն տեղւոյդ հոգևոր դպրոցին։

«Ի վերջոյ մաղթելով ի Տեառնէ զհովանաւորութիւն երկնառաք շնորհաց և յաւիտենական ողորմութեան Աստուծոյ ի վերայ հոգևոր դպրոցին Շուշւոյ հարկադրեմք զամենասիրելի հասարակութեանդ չխնայել յամենայն դէպս զօժանդակութիւն ձեր կամաւոր նպաստամատոյց նուիրանաց ի հաստատութիւն և ի ճոխութիւն վերոյիշեալ դպրոցին յաղագս լուսաւորութեան հարազատ որդւոցս Գրիգորի Մեծի նախահայրապետի և մերս նախամեծար պատրիարքական Մայր-Աթոռոյ Կաթուղիկէ Էջմիածնի»։

Մեր ձեռքն ընկած մի փոքրիկ տետրակից երևում է այդ դպրոցի մուտքի և ծախքի հետևեալ ցուցակը։

ՑՈՒՑԱԿ

Մտից և ծախուց դրամաւոր արդեանց հոգաբարձութեան հոգևոր դպրոցին հայոց Ղարաբաղու, յօրէ բացման նորին, այն է՝ սկսեալ ի 12-էն օգոստոսի 1860 ամի ցվերջ դեկտեմբերի 1869 ամի։

№	Մուտք եւ ծախք	Արժէքեայ	
		Ռուբ.	Կոպ.
1	Ի 12-էն օգոստոսի 1860 ամի ցվերջ տարւոյն եղեալ է մուտք	1979	94
	Ծախք ի նոյն ժամանակս	446	98
2	Ի 1861 մուտք	9053	$76\frac{3}{4}$
	Ծախք	7559	85
3	Ի 1862 մուտք	7335	41
	Ծախք	4585	$7\frac{3}{4}$
4	Ի 1863 մուտք	4835	$21\frac{1}{4}$
	Ծախք	5067	28
5	Ի 1864 մուտք	7033	$65\frac{1}{2}$
	Ծախք	6045	$60\frac{3}{4}$
6	Ի 1865 մուտք	6975	$14\frac{1}{4}$
	Ծախք	6966	$39\frac{1}{4}$
7	Ի 1866 մուտք	8902	$35\frac{1}{2}$
	Ծախք	8820	$92\frac{1}{2}$
8	Ի 1867 մուտք	7181	96
	Ծախք	6596	49
9	Ի 1868 մուտք	6203	$86\frac{1}{2}$
	Ծախք	6464	67
10	Ի 1869 մուտք	4404	$76\frac{1}{2}$
	Ծախք	4923	$56\frac{1}{2}$
	Բոլոր մուտքն է	65305	$60\frac{1}{4}$
	Ծախքն է	59893	$78\frac{1}{2}$
	Առձեռն մնաց	5411	$81\frac{3}{4}$

1837 թ. բացված թեմական դպրոցի մուտքի և ծախքի հաշիւները, որ անցել են ուղղակի առաջնորդների ձեռքով, որովհետև դպրոցը հոգաբարձուներ չէ ունեցել, անշուշտ կը գտնվի առաջնորդական գործերում, իսկ 1860 թւից սկսած մուտքի և ծախքի ցուցակը դնելով ընթերցող հասա-

---

*) Տես «Մշակ» № 162.

կանների մասին։ Նա չը գիտէ, որ եւրոպացի վաճառականն օրական որոշ ժամանակ է աշխատում, բայց աւելի հարուստ է հայ վաճառականից։ Եւրոպացի վաճառականը փող էլ է աշխատում, գիրք, լրագիր կարդում, թատրոն է գնում, զբօսնում, մինչդեռ հայ վաճառականներն իրանց կեանքը միայն փող աշխատելու մէջն են գտնում...

Եւ հարկաւոր է փոխել գաւառական վաճառականներին։

Եւ մեր գաւառական ինքնավարութիւնները օրինակ պէտք է առնեն Թիֆլիսի քաղաքային դումայից, մշակեն կանոնադրութիւն առեւտուրը սահմանափակելու մասին և առաջարկեն տեղական նահանգապետին՝ հաստատելու համար։

Ց. ք. Գրիգորեան

Ծարսկիէ-Կոլօդցի

ՅԱՐԳԱՆՔ ԴԷՊԻ ԱՐԺԱՆԱՎԱՅԵԼ ԱՆՑԵԱԼԸ

«Հորիզոնի» № 146 ում «Կրթական և բժշկական գործը Ղափանում» վերնագրով յօդուածում թղթակից Արծւիկը նկարագրել է այդ գաւառամասի կրթական և բժշկական գործի անմխիթար վիճակը։

Հրապարակով շատ անգամ է նկատվել գաւառական թղթակցի թիւր և սխալ տեղեկութիւնների վնասակարութեան մասին, պահանջվել է նրանից չը շահագործել մամուլը մէկին վարկաբեկելու, միւսին մեծարելու համար. չը գրել գրած լինելու համար, այլ տալ գաւառում տեղի ունեցող պատկերների ճշգրիտ նկարագրութիւնները առանց համեմելու անհատական համակրանքով ու հակակրանքով։ Արծւիկի վերոյիշեալ յօդուածի գլխաւոր կէտը բռնում է դպրոցական հարցը, որի աննորմալ դրութիւնը վերագրում է շրջանային տեսուչների թուլութեան, ի բաց առեալ վերջին ուսումնական տարին, որը արտայայտվեց իր գործունէութեամբ. այսպէս է յայտարարում Արծւիկը։

Ցաւալի յօդուածագիրը կամ տեղեակ չէ Ղափանի կրթական գործի և նրա ղեկավարների գործունէութեան հետ, կամ գիտակցաբար խեղաթիւրել է օրվայ լոյսի պէս պարզ իրողութիւնը՝ սև խաչ քաշելու դպրոցական նախկին տեսուչների բեղմնաւոր գործունէութեան վրա։

Մօտիկ կանգնած լինելով Ղափանի դպրոցական կեանքին, պարտք եմ համարում երկտողով ուղղել յօդուածագրի փոքրիկ սխալը։

Ղափանի դպրոցական կեանքը 5 տարվայ պատմութիւն ունի. դպրոցները բացվել են «Արամազդ ընկ.» և Բ. Հ. Կուլտ. Միութեան տուած նպաստներով։ Քանի դեռ չը կար թեմական տեսչութիւն, դպրոցների հոգողութիւնը ընկերութիւնների կողմից յանձնված էր Յովհ. Գէորգբէկեանին։ Պատահական անձնաւորութիւն չէ Գէորգբէկեանը, այլ ընկերութիւնների կողմից ճանաչված, ժողովրդի կողմից յարգանք վայելող մի փորձված անձնաւորութիւն. և չը սխալվեցին ոչ դպրոցական խորհուրդները յիշեալ ընկերութիւնների և ոչ ժողովուրդը. նա իր տոկուն աշխատասիրութեամբ և հմտութեամբ անչափ նպաստեց նորաբողբոջ դպրոցական կեանքի բարգաւաճման. նրա համար մի իդէալ էր դարձել հայրենիքի կրթական գործը, որը արտայայտվում էր հասարակական ժողովներում նրա ունեցած զրոյցների ժամանակ. և շնորհիւ նրա այդ բնական բարի ձիրքին՝ Ղափանի մօտ 13 գիւղերում շինվեցին դպրոցական յատուկ շինութիւններ։ Նա՝ չը նայած իր տարիքով անց, բայց գործելու եռանդով հասակին՝ տարին 3—4 անգամ այցելում էր դպրոցները, ամենայն ուշադրութեամբ քննում աշակերտութիւնը, ունենում միշտ հասարակական ժողովներ, և նրա իւրաքանչիւր այցը մի մի պլիւս էր դպրոցը ժողովրդականացնելու գործում. նրա դեվիզն էր՝ սերտ կապ հաստատել ժողովրդի և դպրոցի միջև, առանց որին դպրոցը մի խորթութիւն կը թւայ, որի համար և պէտք է տեսուչների յաճախակի այցելումը։ Նա խօսքի մարդ չէր, նա ամեն ինչ գործով էր ապացուցանում. ով լինէր նրա տեղ՝ ծերութեան մօտիկ տարիներին Ղափանի սար ու ձորերով ձմրան բուք ու բորանին ձի նստած դպրոցները կը շրջէր։ Ի՞նչն էր ստիպողը։ Նիւթական վարձատրութիւնը։ Ոչ, նա ապահով է այդ կողմից։ Ժողովրդի լուսաւորութիւնը, նրա ինքնաճանաչութեան հասնելը, ահա շարժառիթը նրա կրած չարչարանքների։ Սրանք փոքր գործեր չե՞ն՝ ան էլ երէկվայ գործեր։

Նա քաղաքավարի էր և ուսուցիչների հետ, իր ունեցած մանկավարժական պատրաստութեամբ օգնութեան էր հասնում ամեն մի ուսուցչի, իւրաքանչիւր դպրոցին աշխատում էր հայթայթել դասական անհրաժեշտ պիտոյքներ և մանկական գրադարան ի հաշիւ ուսումնարանական ընկերութիւնների, որը և աջողվեց նրան։

Ղափանի դպրոցական պատմութեան մէջ Գէորգբէկեանի անունը պատուաւոր տեղ է բռնում, որպէս դպրոցական սկզբնական վարիչ։

Այսքանը Գէորգբէկեանի մասին։ Անցնենք երկրորդին։

1910/11 ուսումնական թւին, երբ հաստատվեց Երեւանի թեմի դպրոցական տեսչութիւնը, հոգևոր իշխանութեան կողմից Զանգեզուրի ծխական դպրոցների տեսուչ նշանակվեց հանգուցեալ Սիմէօն Տէր-Մինասեանը, մի անսահման աշխոյժ, մի մարմնացած եռանդ, բռնկված գործելու, անդադրում գործելու տենչով։ Նա իր կարճատև պաշտօնավարութեան ժամանակ ցոյց տուեց անձնուիրութիւն դէպի իր ստանձնած պաշտօնը, այցելում էր կանոնաւոր կերպով բոլոր դպրոցները, կազմակերպում փորձնական դասեր, ուսուցչական շրջանային համագումարներ։ Դարձեալ մեծ ծառայութիւն, որ անմոռաց պիտի մնայ ընդհանրապէս Զանգեզուրի, մասամբ Ղափանի դպրոցական աշխարհում և ոչ թէ թուլութիւն յայտաբերվի։

Թեւով համառօտ երկու տեսուչների գործունէութիւնը՝ ասեմ մի քանի խօսք և այժմեան տեսուչ Թադէոս Խզմալեանի մասին։ Խզմալեանը եռանդուն ու բեղմնաւոր գործիչ է, հետևապէս նրա այցը Ղափան չէր կարող չարտայայտվել դպրոցական աշխարհում մի ակնյայտնի երևոյթով. փորձնական դասերի կազմակերպութեամբ, իր հետաքրքրական քննադատութիւնով, մանկավարժական զանազան ուղղութիւնների ցուցադրութեամբ և այլ դպրոցական կարգադրութեամբ։

Վերջացնելով յիշեալ տեսուչների գործունէութեան կարճ բնորոշումը՝ իմ վերջին խօսքը կասեմ պ. Արծւիկին. գաւառական թղթակիցը գաւառի հայելին է, որ ցոյց պիտի տայ կենտրօնական մամուլի միջոցով իր շրջանի ճշգրիտ պատկերը. նա կօրեկտ դիրք է բռնելու իրերը և երևոյթները նկարագրելիս առանց անհատական գնահատումների. նա չը պէտք է կեղծէ իրողութիւնը։ Այս է պահանջում գրական էտիկան, իսկ որպէս մարդ պիտի յարգանք տածէ դէպի արժանավայել անցեալը յանձին իր գործիչների։

Արաքս

բակութեան առաջ՝ տեսնվում է, որ նրա նիւթական վիճակը կամաց-կամաց է բարձրացել, թէև ներկայումս նա այնքան էլ նախանձելի վիճակի մէջ չէ։

IV

Ղարաբաղի թեմական հոգևոր դպրոցը ազգին տուել է ընդհանուր քահանաներ, ժիր ուսուցիչներ և հասարակութեան բարեկիրթ անդամներ։ Դպրոցը սիրելի էր ժողովրդին, և նրա անունով տրվելիս կտակները և կամաւոր նուիրատուութիւնները եղել են բազմաթիւ։ Մինչև 1903 թիւը այդ դպրոցն ունեցել է 47,000 ր. մայր գումար, սակայն ինչպէս ժողովուրդը վերջին տարիներս ենթարկվեց ընդհարումների, հարստահարութիւնների, ձերբակալութիւնների, տուգանքների ու ծանրագոյն էկզեկուցիաների և սաստիկ աղքատացաւ, այնպէս էլ թեմական դպրոցը ենթարկվեց նոյնանման ձախորդութիւնների և նրա անձեռնմխելի մայր գումարը ձեռնմխվեց և այսօր հազիւ մնացած լինի մի 8—10 հազար ռուբլի, որ շատ չնչին և աննշան բան է։ Ղարաբաղի պէս մի երկրի թեմական դպրոցի այդպիսի մայր գումարը համեմատած բանկային տոկոս, գործարաններ և առևտրի լայն շրջանառութիւն ունեցողների գործերի հետ, շատ ստորացուցիչ է։

Պատրաստվում է տօնել այդ դպրոցի 50—75-ամեայ յօբելեանը։ Գեղեցիկ միտք։ Յօբելեան կատարել նշանակում է սոսկ շնորհաւորանք և բարեմաղթութիւններ տալ, որ այս կամ այն անհատը կամ հիմնարկութիւնը անցել է կեանքի և գրական ասպարէզի այս կամ այն որոշ շրջանը։

Վերջին ժամանակներս մեզանում յօբելեաններ են կատարվում, և այդ՝ այն ձևը ստացաւ, որ անշուշտ պիտի ժողովրդարութիւն անել և ապահովել անհատի կամ հիմնարկութեան վիճակը։ Յամենայն դէպս պատրաստվում են տօնել Ղարաբաղի թեմական դպրոցի 50—75-ամեայ յօբելեանը և պէտք է լուրջ միջոցների դիմել այդ տօնը յաւերժացնելու մի որևէ մեծ ակտով՝ հիմնովին ապահովել թեմական դպրոցի գոյութիւնը, որ հարկադրված չը լինի մուրացկանութեան դիմել. ապահովելով դպրոցի գոյութիւնը՝ ապա կազմել այնպիսի ծրագիր, որ այդ դպրոցը թեմին մատակարարի հմուտ քահանայացուներ և մանկավարժներ։ 1880—81 ուսումնական տարում Ս. Մանդինեանցի տեսչութեան օրերով՝ աշակերտները ուսման դասընթացն աւարտելուց յետոյ, մի տարի շարունակ լսում էին մանկավարժական դասախօսութիւններ և տալիս փորձնական դասեր, ապա այդպէս պատրաստ գործելու դուրս գալիս։ Այժմեանները լոյս աշխարհն են դուրս գալիս խակ անփորձ և այդպէս էլ շարունակում իրանց գործունէութիւնը, որ տալիս է ոչ ցանկալի պտուղ։

Թեմական դպրոցի համար որոշված յօբելեանը, իմ կարծիքով, բարւոք կը լինի յետաձգել և կատարել 1913 թւին, որովհետև պատրաստութիւններ են տեսնվում կատարել հայ տառերի գիւտի և տպագրութեան յօբելեանը. այս յօբելեանին պիտի մասնակցի ամբողջ հայութիւնը, ապա ուրեմն և Ղարաբաղը, իսկ Ղարաբաղը երկու յօբելեան միասին կատարելու դժուարութիւնը կունենայ, մէկը միւսին խանգարող կը հանդիսանայ։ Յետաձգելով այդ յօբելեանը և խմբեր կազմակերպելով կարելի կը լինի այդ յօբելեանին ցանկալի ձև տալ և ընդմիշտ ապահովել դպրոցի գոյութիւնը և ցանկալի ծրագիր սահմանելով դպրոցը դնել վեհ սկզբունքների և յարգելի գաղափարի վրա։ Այդ դպրոցում սովորում են չքաւոր դասակարգի զաւակները, ապա ուրեմն յուսալի է, որ մեր ունեւորները այնպիսի նուիրատուութիւններ կանեն, որ ընդմիշտ ապահովված լինի դպրոցի գոյութիւնը։

Պետ

ՋՐԻ ՀԱՐՑԸ

Նոր-Բայազէտ, 21 յուլիսի

Առաջներում ջրի հարցը մեզանում երկրորդական, նոյնիսկ երրորդական տեղն էր բռնում ժողովրդական տնտեսութեան մէջ, մանաւանդ այն ժամանակներում, երբ անձրևների շրջանը տեւում էր օրեր, շաբաթներ։ Այժմ զգալի է ջրի հարցը իւրաքանչիւրի համար, ով իսկապէս մի փոքր հողագործական տնտեսութիւն, ով ջրելու և ոռոգելու մի փոքրիկ ածու ունի։

Այդ առիթով ահա մեր քաղաքի մօտակայ երկու գիւղերի՝ Դալի-Ղարդաշի և Բեօսա-Ահմեդի հասարակութիւնները կռիւ-զալմաղալի մէջ են ջրի հարցի վերաբերմամբ։ Ջրի կարիքը մեզանում, մանաւանդ գաւառում, աւելի սուր կերպարանք է ստանում ամառվայ յունիս և յուլիս ամիսներում, երբ մանաւանդ անձրևները սակաւ են լինում։ Իսկ այս տարի, ինչպէս յայտնի է, մեզանում անձրևներ շատ քիչ տեղացին։ Հէնց այդ պատճառով յիշեալ գիւղերի ժողովուրդը իրար ձեռքից էր խլում ջուրը՝ իւրաքանչիւրը իր ցանքերը ոռոգելու համար։

Վերջին տարիներս, երբ ջրի կարիքը հետզհետէ առաջնակարգ խնդիրների շարքն անցաւ ժողովրդական տնտեսութեան մէջ, ջրի հարցը մէջտեղ եկաւ նաև վերը յիշված գիւղերի հասարակութիւնների համար, ուստի ջրաբաշխական կանոնների համաձայն՝ գաւառիս ջրբաժանը—միրաբը—իր որոշումը կայացնելով 1910 թ. բաժանեց այդ երկու գիւղերի ջուրը 5 առանձին մասերի, որոնց $^3/_5$-ականը յատկացվեց Դալի-Ղարդաշի հասարակութեան, իսկ $^2/_5$-ականը թողնվեց Բեօսա-Ահմեդի ժողովրդի կարիքների համար։

Սակայն անցեալ յունիս ամսին Դալի-Ղարդաշի հասարակութիւնը մասամբ արգելք եղաւ իր հարևան Բեօսա-Ահմեդի հասարակութեանը՝ ջրից օգտվելու հերթին, որի պատճառով վերջինիս ցանքերի մի մասը, մօտ 40 դեսեատին, ենթարկվեց զգալի չորութեան, մեծ վնասներ պատճառելով Բեօսա-Ահմեդի հասարակութեան, որը իր բողոքը բարձրացրեց Դալի-Ղարդաշի համայնքի դէմ՝ իր հասանելիք ջուրը արգելելու նկատմամբ։ Բողոքող համայնքը իր արձանագրութեան մէջ ականատես վկաների որոշմամբ 750 ռուբլու վնաս է ներկայացրել կառավարչական շրջաններում, որոնք, այնու ամենայնիւ, վնասները լուսաբանելու համար, ցանկալի են համարում մի առ մի որոշել, թէ ով ի՛նչքան վնաս է ունեցել առանձնապէս, և ըստ այնմ պահանջել Դալի-Ղարդաշի հասարակութիւնից, որը ջուրը ամբողջապէս իր սեփական ցանքերի համար գործադրելով զրկել է Բեօսա-Ահմեդի ժողովրդին՝ ոռոգելու իր ցանքերը ժամանակին։

Հակառակ այդ հանգամանքին՝ Դալի-Ղարդաշի գիւղականներն էլ իրանց հերթին ձգտում են կողմնակի ճանապարհներով իրանց վրէժը լուծել Բեօսա-Ահմեդի համայնքից։ Օրինակ՝ նրանք էլ տրամադիր են արօտատեղի համար պահանջ յայտնել իրանց հակառակ համայնքի դէմ, 1000 ռուբլու վնաս պահանջելով Բեօսա Ահմեդի համայնքից, որը իբր թէ իր անասունների նախիրներով կերցրել է Դալի-Ղարդաշի արօտները և այլ այսպիսի աղմկալի ցոյցեր՝ մէկը-միւսի դէմ, որ և զգալի կերպով վնասում են գիւղական ժողովրդի տնտեսութեանը առհասարակ։ Սակայն գիւղացիների այդ վէճը հաշտութեամբ վերջացնելու համար միջնորդ մարդիկ ցանկութիւն յայտնեցին դիմելու աւելի ակտիվ միջոցի՝ երկու հարևան գիւղականների աղմուկը ընդմիշտ դադարեցնելու նպատակով, այն, որ ջրային քանակութեան չափը—շլիւզը—անսխալապէս կառուցել ջրային սահմանի վրա և վերահսկել, որպէս զի իւրաքանչիւր գիւղի հասարակութիւնը անմիջապէս կարողանայ օգտվել իր հասանելիք ջրի քանակութիւնից։ Դա է ուղիղ ճանապարհը։ Հակառակ դէպքում՝ այսօր մէկը զոռով ջուրը տանի, միւս օրը՝ միւսը հերթը կտրի, մի այլը գիշերը ջուրը գողանայ և այլ այսպիսի դաւ-դալմաղալով ծոր կը տանի ջրաբաշխութեան և ոռոգման գործը։

Գ. Սիմոնեան

ՆԻԺԷԳՈՐՈԴԵԱՆ ՏՕՆԱՎԱՃԱՌ

Մանուֆակտուրային շուկայում կենդանութիւն է տիրում։ Գները բարձրանալու մասին ամեն կողմից ստացված տեղեկութիւնների ազդեցութեան տակ, գնելու պահանջ ունեցողները շտապում են գնել։ Պօզնանսկին տօնավաճառում առևտուր անող ֆիրմաներից ստացել է 2700 հակ ապրանքի պատուէր։ Առհասարակ բոլոր մեծ ֆիրմաները տրամադիր են գները բարձրացնելու, ինչպէս Շչօվին, Սերեբրեաննիկով և Շչերբակով ընկերութիւնները։ Երմակովը պատուիրել է իր հաւատարմատարին զեղջ չանել, այլ անպատճառ աւելացնել։ Մեզվեձեվները աւելացրել են կէս կոպէկ, իսկ մի քանի տեսակների վրա նոյնիսկ 1 կոպէկ։ Պօզնանսկին սկզբունքով որոշել է աւելացնել բոլոր ապրանքների գները։

Միջնակարգ և մանր ֆիրմաները վաճառում են նախկին գներով։

Սինգափուրում այս տարի պատահած անբերրիութեան շնորհիւ պղպեղը թանգացել է պուդը 3 ռուբլով։

Ծխախոտը թէև այս տարի աւելի է բերված, քան անցած տարի, այնու ամենայնիւ գները միևնոյնն են մնում անցած տարվայ համեմատութեամբ։

Մահուդեղէնի շուկայում այն համոզմունքն է տիրում, որ մահուդի մեծ պակասութիւն կը զգացվի, մանաւանդ ռուսական նուրբ մահուդեղէնների մէջ։ Էժան տեսակ մահուդեղէն պատրաստող ֆիրմաներից ներկայումս հրապարակի վրա մնում է միայն Կաշտանովը, որ և այժմ թելադրում է իր ցանկացած գները։ Բայց և այնպէս գները մնում են առայժմ անփոփոխ։ Ամենից շատ մահուդեղէն է բերել տօնավաճառ Լըժինի ընկերութիւնը, որը գները պակասեցրել է արշինում 5—9 կոպէկ։

Կօշկեղէնի շուկայում աչքի ընկնող տեղ են գրաւում Սարապուլի գործարանատէրերը, որոնց ապրանքները աւելի են վաճառվում, որովհետև աւելի են գերազանցել նոյնիսկ Մոսկվայի ֆիրմաներից։ Վարշավայի գործարանատէրերը առաջին անգամն են հանդէս գալիս այսպիսի մեծաքանակ ապրանքով, բայց և այնպէս դէպի նրանց աւելի թոյլ տրամադրութիւն է նկատվում տօնավաճառում, և դրա պատճառն այն է, որ Վարշավան աւելի մատակարարում է քաղաքային միջին դասակարգի համար և աւելի շատ ուշադրութիւն է դարձնում արտաքին տեսքի վրա, քան դիմացկունութեան և տեսակը լաւացնելու վրա։ Ահագին ապրանք է կուտակված և դանդաղ է առաջ գնում վաճառքը։ Շնորհիւ նոր ուժեղ մրցութեան՝ պէտք է կարծել, որ գները կընկնեն, թէև սարապուլցիներն ու մոսկվացիները, ապահով լինելով որ իրանց ապրանքները ծախվելու են, կը պահպանեն նախկին գները։

Մորթեվաճառ ֆիրմաներից մի քանիսը հարիւր հազար ռուբլիների առնէնների մորթիներ են ծախել, անցեալ տարվայ համեմատութեամբ 10—25% աւելացած գներով։

Հագուստեղէնի ապրանքների և տրիկօների գները բարձրացել են 3—5%։

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

◆ Կովկասի Փոխարքայի պաշտօնակատարը թոյլատրել է Թիֆլիսի քաղաքային ինքնավարութեանը 80 հազար ռուբլու փոխառութիւն անել՝ գրաւ դնելով բանկերից որևէ մէկում քաղաքային հողերը՝ քաղաքային մանկաբարձական հիւանդանոցի շէնքը կառուցանելու համար։

◆ Կովկասի Փոխարքայի պաշտօնակատարը առաջարկել է Թիֆլիսի նահանգապետին վերաքննել ծառայողների հանգստի մասին քաղաքային դումայի պարտադիր որոշումները՝ յարմարեցնելով նրանց կեանքի պահանջների համաձայն։

◆ Ծառայողների հանգստի վերաբերմամբ հրատարակված պարտադիր որոշումների մի քանի կէտերը վերաքննելու նպատակով, քաղաքային վարչութեան որոշմամբ՝ կազմված է յատուկ խորհրդակցութիւն, որի մէջ մտնում են իշխ. Ն. Ն. Արղութեան - Երկայնաբազուկ, վարչութեան անդամ Մ. Ն. Աթաբէգեան, Թիֆլիսի ոստիկանապետի պաշտօնակատար կապիտան Ստրօյեվ, քաղաքային սանիտարական մասի վերահսկիչ բժ. Կ. Ն. Ստեփանեան և առևտրա-արդիւնաբերական մասի աւագ վերահսկիչ Շահվերդեանը։

◆ Կովկասեան Կայսերական Գիւղատնտեսական Ընկերութիւնը 750-ի չափ թերթիկներ էր ուղարկել Անդրկովկասի զանազան տեղերը հարցնելով տեղեկութիւններ բամբակի ցանքսերի դրութեան մասին։ Մինչև օրս դրանցից ստացված են միայն 250-ի չափ պատասխաններ։

◆ Կովկասեան բարձր իշխանութեան թոյլտուութեամբ անդրկովկասեան բամբակագործների երկրորդ համագումարը տեղի կունենայ Թիֆլիսում սեպտեմբերի 25-ից մինչև հոկտեմբերի 1-ը։ Նախկին որոշումը՝ հոկտեմբերի 1—6-ը՝ փոխված է, որպէս զի հնարաւորութիւն տրվի Թիֆլիսի համագումարում մասնակցողներին մասնակցելու նաև Պետերբուրգի համագումարին։ Թիֆլիսի համագումարի նախագահն է Փոխարքայի քաղաքացիական մասի օգնական սենատոր Է. Ա. Վատացին, իսկ նախագահի օգնական՝ Կովկասի գիւղատնտեսութեան մասի տեսուչ Ի. Կ. Վասիլեվ։

◆ Նինա Սամխարշվիլին դիմել է Թիֆլիսի նահանգապետին՝ խնդրելով թոյլտուութիւն իր խմբագրութեամբ հրատարակելու Թիֆլիսում «Մցկնոբրօբիս Կալկալա» անունով վրացերէն մի ամսաթերթ։

◆ «Հասարակական ակումբի» խորհուրդը հրաւիրել է Մոսկվայի պրօֆեսոր Իւ. Ա. Այխենվալդին սեպտեմբեր ամսում մի քանի դասախօսութիւններ կարդալու նոյն ակումբում ռուսաց և եւրոպական գրականութիւնից։

◆ Երկրագործութեան մինիստրութիւնը Կայսերական Կովկասեան Գիւղատնտեսական Ընկերութեանը միանուագ յատկացրել է 2,000 ռուբլի նպաստ՝ «Кавказское Хозяйство» գիւղատնտեսական թերթի հրատարակութեան համար։

◆ Կ. Հ. Բ. Ընկերութեան խորհուրդը խնդրում է մեզ տպել, որ ինքն ստացել է տ. Մարիամ Փրիդոնեանից և որդիներից 25 ռուբլի հանգուցեալ Տիգրան Սէյլանեանի դագաղի վրա պսակ դնելու փոխարէն։

◆ Քաղաքային վարչութիւնը սկսել է քննել քաղաքի ծախքերի 1913 թւի նախահաշւի նախագծից բժշկական և բարեկարգութեան վերաբերեալ մասերը։

◆ 1913 թւի իր նախահաշւի մէջ քաղաքային վարչութիւնը որոշել է մտցնել 100 ր. ի նպաստ Հալաբարի երեխայոց ձրի ճաշարանի։

◆ Ժողովրդական զւարճութիւնների Թիֆլիսի ընկերութեան կոմիտէտը Մուշտայիդ այգում յուլիսի 20-ին, 21-ին և 23-ին կազմակերպած ժողովրդական զւարճութիւններից զուտ արդիւնք ստացել է 1160 ռուբլի։

◆ Թիֆլիսի այգեգործական դպրոցի կառավարիչը թոյլտուութիւն է ստացել զբօսանք կազմակերպելու (յուլիսի 26-ին, 27-ին և 28-ին) Մուշտայիդ այգում նոյն դպրոցի չքաւոր աշակերտների օգտին։

◆ Ամսիս 27-ին լրանում է Վանքի աւագ եկեղեցու միաբան Գրիգոր քահանայ Խօջաէնաթեանցի քահանայագործութեան 25-ամեակը։ Ինչպէս լսում ենք, նրա ծխականներից մի խումբ մտադիր է կատարել յօբելեանը։

◆ Կ. Հ. Բ. Ընկ. Թելաւի ճիւղի նախագահ Գ. Տէր-Սարգսեանցին թոյլատրված է կազմակերպել մի զբօսանք Ընկերութեան յիշեալ ճիւղի օգտին։

◆ Դարձնում ենք բարերարների ուշադրութիւնը Գօրդի գիւղի բնակիչ Կոստանդին Կիրտաձէի անօգնական վիճակի վրա։ Խեղճ մարդը երկար տարիներ բանւոր է եղել Բաթումում, անուանի մի ֆիրմայում, սակայն մարմնի ձախ մասից կաթուած ստանալով՝ զրկվել է աշխատելու ընդունակութիւնից և այսօր ոչ միայն բժշկվելու, այլ և կերակրվելու անհրաժեշտ միջոցներից զուրկ է։ Նպաստը կարելի է ուղարկել «Մշակի» գրասենեակը՝ ըստ պատկանելոյն հասցնելու համար։

◆ Սարմալուի փոխատու-խնայողական բանկի ընկերութեանը յատկացված է 500 ր. անդառնալի նպաստ՝ բամբակագործութիւնը զարգացնելու համար միջոցներ հայթայթելու։

◆ Բագւի քաղաքային դումայի ձայնաւոր Խ. Ա. Վերմիշեանը առանձին պատճառաբանված կարծիք է ներկայացրել դումային Բագւում էլեքտրաքարշ անցկացնելու հարցի առիթով։ Կոնցեսսիայով շինել տալու ձևը համարելով վնասակար քաղաքի համար, Վերմիշեանը առաջարկում է շինել քաղաքի հաշւով։ Վերմիշեանի կարծիքին միացել է վերաստուգիչ յանձնաժողովի նախագահ Մանչօն։

◆ Բօրչալուի գաւառի Եկատերինենֆելդ գիւղում ուղղափառ եկեղեցի կառուցանելու համար ընտրված կոմիտէտը դիմել է կովկասեան բարձր իշխանութեան՝ խնդրելով նպաստ տալ յիշեալ եկեղեցու շէնքը աւարտելու համար։

ՈՍՏԻԿԱՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

◆ Յուլիսի 25-ին, Թիֆլիսի Միքայէլեան հիւանդանոցի շինութեան մէջ ապրող Թիֆլիսի 2-րդ կարգի վաճառականի այրի Գայիանէ Նիկոլաեվնա Պիչխուլօվան (մասաժիստկա) յայտնեց ոստիկանութեանը, որ նոյն օրը գիշերը իր բնակարանից լուացքի տաշտից, յայտնի չէ թէ ով, գողացել է թաց շորերը՝ 60 ռուբլու արժողութեամբ։ Կասկած է յայտնել հիւանդանոցում աշխատող Գօրու գաւառի Ախալսօփելի գիւղի բնակիչ Ալէքսէյ Մարանէլիի վրա։ Վերջինս ձերբակալվելուց յետոյ խոստովանել է իր յանցանքը։ Շորերը վերադարձված են տիրոջը։

◆ Յուլիսի 25-ին ոստիկանութիւնը կալանաւորել է մուրացկաններ՝ II քաղաքամասում 2 հոգի, 8-րդում՝ 2 և 9-րդում 2։ Նոյն օրը շուրջկալի ժամանակ կալանաւորվել են անցագիր չունեցող՝ 2-րդ քաղաքամասում՝ 7 հոգի, 4-րդում՝ 6, 8-րդում՝ 14 և 9-րդում՝ 42 հոգի։

ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱՅԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՋԸ

◆ «Р. С.» լրագրին հեռագրում են Պարիզից, որ գերմանական սօցիալ-դեմօկրատները պատրաստ են դրամական օգնութիւն ցոյց տալ ռուսաց սօցիալ-դեմօկրատիային այն պայմանով միայն, եթէ նրանց երկու ֆրակցիաները՝ փոքրամասնականներն ու մեծամասնականները՝ միանան։

◆ Մինչև յուլիսի 26-ը Թիֆլիսի քաղ. դումայի ընտրողական ցուցակների մէջ մտցված են պետական բնակարանային տուրք վճարողներից՝ ռուսական կուրիայում՝ 1243 հոգի, ընդհանուր՝ 2500 հոգի։ Առևտրա-արդիւնաբերական ցէնզով, ռուսական կուրիայում 223, ընդհանուր՝ 1368, Թիֆլիսի գաւառից առևտրա-արդիւնաբերական ցէնզով՝ ռուսական կուրիայում՝ 19 և ընդհանուր՝ 298 հոգի։

◆ Թիֆլիսի ոստիկանապետը հետևեալ հրամանն է տուել քաղաքային ոստիկանութեանը. «Ներքին գործերի մինիստրութեան տուած մեկնութեան համաձայն Պետ. Դումայի ընտրութիւններին մասնակցելու իրաւունք ունեցող անձանց, որոնք բնակարանային տուրք չեն վճարում կամ կենսաթոշակ են ստանում, ոստիկանութիւնը, ընտրողական կանոնների 57-րդ յօդուածի հիման վրա, պէտք է տայ վկայական ընտրութիւններին անարգել մասնակցելու համար: Որովհետև, իմ ստացած տեղեկութիւնների համաձայն, մի քանի ոստիկանամասերում ուշացնում են տալ զանազան պատճառաբանութիւններով, ուստի ի նկատի առնելով Պետ. Դումայի ընտրութեան կարևորութիւնը առաջարկում եմ պրիստաւներին սահմանել հետևեալ կարգը իրանց ոստիկանամասերում՝ առաւօտեան ժամը 9—3-ը և կէսօրից յետոյ ժամը 6—8-ը երեկոյեան, տալ այդպիսի վկայականներ խնդրողներին, անձամբ կամ իրանց օգնականների միջոցով»:

ԳԻՏՈՒԹ., ԳՐԱԿԱՆ. ԳԵՂԱՐ.

ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Յովակիմ Սօլօվեան «**Քննադատական ակնարկներ**», հատոր առաջին, ժամանակակից քնարերգութեան փիլիսոփայութիւնը. 233 էջ. գինը 50 կ., տպարան «Հերմէս», Թիֆլիս:

Մեր քննադատական գրականութեան մէջ չենք հանդիպում մի որևէ աշխատութեան, որի մէջ թագաւորէ առողջ քննադատական ոգին, առանց սանտիմենտալիզմի և շաբլօն բառերի: Մեր նորագոյն թէ հին բանաստեղծներին «քննադատած» ժամանակ, իւրաքանչիւր յօդուածի հեղինակ (նայած անձնաւորութեանը) կամ աշխատում է իր քննադատած հեղինակ բանաստեղծին երկինք բարձրացնել, նրան տաղանդ, հանճար ու էլ՝ ես ինչ գիտեմ ինչ դրական յատկութիւններով որակել, և կամ տգէտ, մտքի թռիչք, թափ և այլ բարեմասնութիւններից զուրկ մէկը հռչակել:

Առողջ, անկողմնակալ ոգին, քննադատական անալիզը, տարրալուծումը տուեալ հեղինակութեան կամ բանաստեղծութեան՝ իսպառ բացակայում է:

Յ. Սօլօվեանի ներկայ գրքում մենք գտնում ենք հայ քնարերգութեան փիլիսոփայական մտքի աստիճանական զարգացման ուրուագիծը, բանաստեղծների այս կամ այն կատեգօրիային դասումը, ռուս կամ օտարազգի բանաստեղծութիւնների կամ, աւելի ճիշդն ասած, բանաստեղծների՝ մեր բանաստեղծների վրա ունեցած ազդեցութիւնը, նրանց քաղաքացիական մօտիվները, մեր բանաստեղծների յետամնացութիւնը և ժամանակի ու կեանքի պահանջների հետ չընթանալը որոշ դէպքերում, մասնակի կերպով՝ նրանց սովորական շաբլօնապաշտութիւնը և այլն և այլն:

Գրքի հեղինակը այլ և շատ որոշ կերպով ցոյց է տալիս մեր բանաստեղծներից ոմանց ինդիվիդուալիստական, իսկ ոմանց կոլլեկտիվիստական հակումները, քննադատում է նրանց մէջ ընդհանրապէս նկատվող յոռետեսութիւնը, խարազանելով սովորական լալկանութիւնը, ախ ու վախերը և դրանց փոխարէն անհրաժեշտ գտնելով լաւատեսութեան, վառ և երջանիկ ապագայի երգի երգումը, յոռետեսութեան, պեսիմիզմի վանումը, որպիսիները խիստ աննպաստ ազդեցութիւն են թողնում ընդհանրապէս մարդկային սերունդների հոգու վրա:

Գրքի առաջին մասում քննադատված են՝ Յովհ. Յովհաննիսեանի, Յովհ. Թումանեանի, Լ. Մանուէլեանի և Ալ. Ծատուրեանի բանաստեղծութիւնները, որոնք, ըստ հեղինակի բացատրութեան, ներկայացուցիչ են անցողակի շրջանի և նորանոր որոնումների ու գեղարուեստական դեգերումների, իսկ գրքի երկրորդ մասում հեղինակը խօսում է Յակ. Յակոբեանի և Շուշանիկ Կուրղինեանի մասին, որպէս կոլլեկտիվիստական շկօլային պատկանող բանաստեղծների. և որովհետև ինքը գրքի հեղինակը պատկանում է կոլլեկտիվիստական ուղղութեանը, պարզ է, որ վերոյիշեալ բանաստեղծներին էլ բարձր է դասում միւսներից, ապագան նրանցը համարելով:

Մեր ինդիվիդուալիստ բանաստեղծներից Յ. Սօլօվեանը խօսում է Աւետիք Իսահակեանի և Վահան Տէրեանի մասին, որոնք, հեղինակի ասելով, տառապող մարդկութեանը մօտենալու փոխարէն, հէնց իսկ այդ մարդկութեան ապագայ երջանկութեան ազդակները որոնում են իրական կեանքից դուրս, հեռաւոր հօրիզոններում և եթերքների մէջ:

Գրքի մէջ ընթերցողը կը գտնի յայտնի ծանօթութիւններ նոր ուղղութիւնների, բացատրութիւններ յայտնի շկօլաների և փիլիսոփայական ըմբռնումների մասին:

A.

ՆՈՐ ՍՏԱՑՎԱԾ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

1) «Կաթողիկէ Արձագանք» շաբաթաթերթի № 43-ը 1912 թ., Կ. Պոլիս: 2) «Նոր Առողջապահիկ» երկշաբաթաթերթի № 10-ը 1912 թ., Թիֆլիս: 3) «Հայկունի» կիսամսեայ հանդէսի №№ 10-ը, 11-ը և 12-ը 1912 թ., Մարզուան: 4) «Վանտոսբ» կիսամսեայ հանդէսի №№ 11—12-ը, 13-ը, 14-ը և 15-ը 1912 թ., Վան: 5) «Մարմնամարզ» պատկերազարդ կիսամսեայ հանդէսի №№ 11-ը և 12-ը 1912 թ., Կ. Պոլիս: 6) «Շանթ» կիսամսեայ հանդէսի №№ 19-ը, 21-ը, 22- ըև 23-ը 1912 թ., Կ. Պոլիս: 7) «Հասկեր» մանկական ամսագրի № 5—6-ը (մայիս-յունիս) 1912 թ., Թիֆլիս: 8) «Արարատ» ամսագրի № 5—6-ը (մայիս-յունիս) 1912 թ., Էջմիածին: 9) «Աղաղան» ամսագրի № 2-ի յաւելուածը և №№ 3-ը և 4-ը 1912 թ., Թաւրիզ: 10) «Միութիւն» ամսաթերթի (պաշտօնաթերթ Հայկ. Բարեգ. Ընդհ. Միութեան) № 6-ը 1912 թ., Կահիրէ:

ԳԻՏԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

◆ Մօտ ժամանակներս Բայէրտալը տեղեկութիւններ է տալիս այն հետաքրքրական ուսումնասիրութիւնների մասին, որ կատարել է նա գլխի ծաւալի և մարդու ինտելիգենտութեան աստիճանը պարզելու համար: Բայէրտալը կատարել է ուսումնասիրութիւն 12,000 դպրոցականների վրա և ուշագրաւ եզրակացութիւնների եկել:

Աշակերտների գլուխների հօրիզօնական ընդգրկումի (շրջագծի) չափը հնարաւորութիւն տուեց բազմաթիւ դէպքերում նախապէս որոշել երեխայի մտաւոր յետամնացութիւնը:

Ուրեմն աշակերտների գլխի չափելը կարող է կարևոր մանկավարժական նպաստամատոյց միջոց հանդիսանալ: Բայէրտալի կարծիքով, այն մանուկները, որոնց գլխի շրջագիծը 7, 10, 12 և 14 տարեկան հասակում չէ հասնում 48, $49\frac{1}{2}$ և $50\frac{1}{4}$ սանտ., չեն կարող փայլել իրանց ընդունակութիւններով: Միևնոյն հասակի ընդունակ աղջկանց գլխի շրջագիծը լինում է ոչ պակաս, քան 47, $48\frac{1}{2}$ և $49\frac{1}{2}$ սանտ.:

1910/11 ուս. տարվայ վերջին սկսված ուսումնասիրութիւնները հաստատեցին, որ աչքի ընկնող ընդունակութիւններ երբէք չեն պատահում մինիմալ կամ մօտաւորապէս մինիմալ շրջագծով գլուխ ունեցող երեխաների մէջ: Ապա պարզվել է և այն, որ որքան փոքր է երեխայի գլխի շրջագիծը, այնքան քիչ են պատահում միջակից աւելի ընդունակութիւններ, և այնքան յաճախ միջակից պակաս ընդունակութիւններ:

Այսպիսով՝ գլխի մեծութիւնը հանդիսանում է մօմենտներից մէկը, թէև ոչ եզակին, ինտելիգենտութեան աստիճանը որոշելու համար: Այդ եզրակացութիւնը համապատասխանում է և այն փաստին, որ հանճարաւոր մարդիկ, մեծ մասամբ, ունեցել են մեծ գլուխներ:

◆ Վերջերս անգլիացի գիտնական պրօֆ. Սիլվանըս Թամսընը հնարել է մի գործիք, որով կարելի է լինում երկաթուղու ամենաարագ սուրացող գնացքն իսկ կանգնեցնել՝ ցանկալի կէտից 900 ոտք հեռաւորութեան վրա: Այդ գիւտը արված է տելեֆոնի սիստեմին հետևելով և իրանից ներկայացնում է մի հասարակ կոճակ, որը պիտի սեղմել՝ գնացքը կանգնեցնելու համար:

◆ Հայդելբերգի համալսարանի պրօֆ. Ձէրնի՝ քաղցկեղը — րակ — բուժելու համար մինչև վերջերս գործ էր ածում ռադիւ: Բայց ռադին թէ շատ թանգ է և թէ շատ դէպքերում չէր արդարացնում իրանից սպասված ակնկալութիւնը: Ներկայումս պրօֆ. Ձէրնի յայտարարում է, թէ ինքը, իր պաշտօնակից պրօֆ. Օտտօ Հանի հետ, գտել է «մէզօթօրիում» անունով մի նիւթ, որ հեշտութեամբ կարելի է ձեռք բերել և ռադիից աւելի արդիւնաւոր է քաղցկեղի բուժման տեսակէտից:

◆ Չորս ֆրանսիացի գիտնականներ, որոնք Տունիսում (Մարոկկօ) յանուն Պաստեօրի գտնված հաստատութեան մէջ փորձեր էին անում, ներկայումս յայտնագործել են մի շիճուկ, որը պատուաստելով մարդկանց՝ կարողանում են աջողութեամբ կռուել խօլերայի դէմ, միանգամայն ազատ պահելով վարակումից: Այդ գիտնականներն առաջին փորձերն հէնց իրանց անձի վրա են արել՝ կատարելապէս գոհացուցիչ հետևանքներով:

◆ Պրօֆ. Մէչնիկովը վերջերս հետաքրքրական փորձեր է արել վաղահաս ծերութեան դէմ կռուելու նպատակով: Նա ծերերին ներարկել է «գլիսօբակտէրին» անունով մի շիճուկ և արդիւնքը այնքան գոհացուցիչ գտել, որ յայտարարում է, թէ այդ միևնոյն շիճուկի ներարկումով ինքը կարող կը լինի մարդկանց ևս երիտասարդ պահել՝ միջոց տալով նրանց այսուհետև 150—200 տարի ապրելու:

ՕՐՎԱՅ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

◆ «Каспій» լրագրի մէջ բժիշկ Կարաբէգովը հանդէս է եկել հերքելու «Р. Сл.» լրագրի տուած այն տեղեկութիւնները, թէ իբր Կարաբէգովը ռուսաց կառավարութեանն է յանձնել երիտասարդ-թիւրքերի պանիսլամիստական ծրագիրը Ռուսաստանում ագիտացիա մղելու մասին: Կարաբէգովը յայտնում է, որ այդ լուրերը տարածել է երիտասարդ-թիւրքերի թշնամին՝ աբդիւլ-համիդեան դահիճ Շէրիֆ-փաշան: «Մ. և Ա.» կուսակցութիւնը, — գրում է բժ. Կարաբէգովը, — պանիսլամիստական ոչ մի ծրագիր չէ պարզել իմ առջև և չէ էլ լիազօրել և ոչ մի բանում: Բ. Դուռը ոչ մի լիազօրութիւն կամ փաստաթղթեր ինձ չէ տուել, որպէս զի ես կարողանայի յանձնել ռուսաց կառավարութեանը»: Աւելի մանրամասն նամակով Կարաբէգովը դուրս կը գայ հերքելու այդ բոլորը «Р. Сл.» լրագրի մէջ:

◆ Իրաւունք ունե՞ն արդեօք դումայի ձայնաւորները քաղաքային պաշտօններ վարել և ռոճիկ ստանալ: Այդ հարցին իբրև պատասխան «Городское Дѣло» թերթի № 7-ի մէջ տպված է սենատի տուած մի բացատրութիւնը Օդեսայի քաղաքային դումայի որոշման առիթով: Վերջինս լոմբարդի համար ընտրել է դիրեկտոր՝ ձայնաւոր Պասօխովին և օգնականներ՝ նոյնպէս ձայնաւորներ Ուշակովին ու Ռըշկովին: Նախկին քաղաքագլուխ Տօլմաչևը բեկանել էր այդ ընտրութիւնները այն հիման վրա, որ ձայնաւորները իրաւունք չունեն քաղաքային ինքնավարութեան մէջ ռոճիկով պաշտօններ վարել: Օդեսայի քաղաքային գործերի ատեանը գտաւ ընտրութիւնները օրինաւոր: Սակայն Տօլմաչևը այդ գործը ուղարկեց սենատի հայեցողութեան: Սենատը իր կողմից բացատրեց, որ ձայնաւորները կարող են այդպիսի պաշտօններ վարել միայն այն դէպքում, եթէ դուրս կը գան ձայնաւորների կազմից:

◆ Ռուսաստանի հարաւային երկաթուղիների շրջանում հիմնված առաջին երկաթուղային բանկը մեծ աջողութիւն ունի:

◆ Լաւատեղեակ անձանց վկայութեամբ, քաղաքային օրէնքներ կը մտցվեն Ախալքաղաքում անպատճառ առաջիկայ տարվանից:

◆ Խրիստիանիայում բժ. Գանսէնը գտել է մի բացիլ, որը պատճառ է լինում ատամների թափվելուն:

◆ Սօֆիայում բոլգարական ժուռնալիստների կայացրած հակայական միտինգը իր բողոքն է արտայայտել սինոդի դէմ, որը խնդրիգներ է լարում էկզարխի դէմ: Բոլգար համայնքը կողմնակից է եկեղեցիների միութեան: Պոլիս՝ էկզարխին համակրական հեռագրեր են ուղարկել:

◆ Ալբանիայում ապստամբել են մալիսօրների բոլոր ցեղերը:

◆ Չը նայելով տարվայ առատ բերքին, Թէհրանում հացի պակասութիւն է զգացվում: Գները բարձրանում են. հացի մի քանի փուռեր արդէն փակված են: Պատճառը արհեստական թանկացումն է:

◆ Արաբները կողոպտում են Բիրման քաղաքը: Ազգաբնակութիւնը ապաւինում է անգլիական հիւպատոսի պաշտպանութեան:

◆ Թէհրանում դեմօկրատները մի թռուցիկ են հրատարակել, մեղադրելով կառավարութեանը վաճառվելու մէջ և բողոքելով փոխառութեան դէմ: Կաշկայինները կտրելով շիրազեան ճանապարհի հաղորդակցութիւնը սպառնում են քաղաքին: Ժանդարմների հրամանատար Սիվէրսը գնում է կռուելու նրանց դէմ:

◆ Խարբինից հաղորդում են լրագիրներին, որ կօրէացիները հրաժարվում են սուգ պահել եապօնական կայսրի մահվան համար:

◆ Գերմանիայում՝ «Times» լրագրի թղթակցին Պեկինի կառավարութեան կողմից քաղաքական խորհրդական հրաւիրվելու փաստին կարևոր նշանակութիւն է տրվում: Դա համարում են Անգլիայի ազդեցութեան ուժեղացումը Պեկինում ի վնաս Գերմանիայի:

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐ. ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾ.
25 յուլիսի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ: «Правда» լրագրի խմբագիրը յուլիսի 24-ի համարում «Հրէաները և ընտրութիւնները» յօդուածը զետեղելու համար կալանաւորված է 3 ամիս ժամանակով:

«Недѣля» և «Вѣстникъ Знанія» թերթերի խմբագիրը 250 րուբլի տուգանքի է ենթարկված յուլիսի 22-ի գաւառական լուրերի համար:

Ժողովրդական լուսաւորութեան մինիստրութիւնը բարեփոխում է նոր լեզուների դասաւանդութեան եղանակը:

ՊՐԱԳԱ: Չեխական համալսարանի պրօֆ. Տեւլըզը անձնասպանութիւն գործեց, ցած նետելով իրան տան երկրորդ յարկից:

ԽԱՐԿՈՎ: Հանքարդիւնաբերողների ժողովը որոշեց հրաւիրել 37-րդ համագումարը նոյեմբերի 25-ին: Խորհրդի նախագահը ուղևորվեց Բեռլին, Վեստֆալիա և Սաքսոնիա ծանօթանալու բանուորների ապահովագրութեան պետական կազմակերպութեան ձևի հետ և ուղղութիւն տալու ժողովի կողմից արտասահման ուղարկված էքսպէդիցիայի աշխատանքներին: Նախագահը միևնոյն ժամանակ կը ծանօթանայ ռուս-գերմանական դաշնագիրը վերանորոգելու հարցերի հետ, մտքերի շփումն ունենալով Գերմանիայի խոշոր արդիւնաբերողների կազմակերպութիւնների հետ:

ՄՈՍԿՎԱ: Տեղի ունեցաւ մեղուապահների երկրորդ համասլաւօնական համագումարը: Համագումարի անունից ողջոյնի հեռագիր ուղարկվեց Նորին Մեծութիւն Թագաւոր Կայսրին: Պատուաւոր նախագահներ ընտրվեցին իշխան Իւսուպով, կոմս Սումարօկով, իսկ նախագահ՝ չեխական եպիսկոպոս Կաբրըլէ: Ապա տեղի ունեցաւ ճաշկերոյթ ստորագրութեամբ, իսկ երեկոյեան հանդիսաւոր գրօսանք Երմիտաժում: Մոսկվայի կողմից ի պատիւ համագումարի անդամների տրված բանկէտին առաջինը առաջարկվեց Թագաւոր Կայսրի կենացը, իսկ պրօֆ. Կուլագինը ամբողջ սլաւօն ազգի կենացը, ապա առաջարկվեցին չերնօգորական և բօլգարական թագաւորների կենացը:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ: Լէբէդէվի գործարանը այրվեց հրդեհից: Վնասը հասնում է 200,000 րուբլու:

Կապիտան Բուդնէվը Ֆարմանի ռազմական օդանաւով, ուղևորներով, թռաւ Պետերբուրգից Գատչինո 40 րոպէում 600 մետր բարձրութեամբ:

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆԸ ՅԱՅՏՆՈՒՄ Է

Ռոստով Դ./Վ., մի խումբ սալմաստեցիներին. — Թաչագողի դիմակն արդէն պատռվել է հրապարակօրէն: Դա էր էականը, որ կատարված է արդէն: Ուստի աւելորդ է այլևս ձեր նամակի լոյս ընծայումը:

Կօկանդ, Պ. Մանուչարեանին. — «Մշակի» յօբելեանի առիթով այդտեղ համակիրների շրջանում հաւաքված 204 ր. գումարի մասին ձեր գրածը տպագրութեան չենք յանձնում դեռ՝ նախ քան ստուգութիւնը:

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱՆԹԱՐ
Յ. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ
Հիմնված 1880 թ.
(Կուկիա, Վօրօնցովի արձանի հանդէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից
ԱՌԱՒՕՏՆԵՐԸ
«606»-Ի ՆԵՐԱՐԿՈՒՄ ԲԺՇԿԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹԵԱՄԲ՝ 11—12 ժ.
Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վերքաբուժութեան վեներական (սիֆիլիս) հ.:
Բ. Գ. ԱՂԱՍԱՐԵԱՆ—1—2 ժ. ներքին և երեխայոց հիւ.:
Կ. Մ. ՉԻԿՕՎԱՆԻ—$9\frac{1}{2}$—10 ժ. աչքի, ներքին ենթարդային:
Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆ—10—11 ժ. մանկաբարձութեան կանանց և երեխայոց հ.:
Ն. Տ. ՄՈՒՂՆԻ—10—12 ժ. ականջի, կոկորդի և քթի հիւ.:
Մ Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վեներական վիրաբուժութեան և միզասեռ. հ.:
Գ. Յ. ԳՈՒՐԳԵՆՈՎ—12—1 ժ. մանկաբարձ., կանանց և երեխայոց հ.:
Ա. Գ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—12—1 ժ. ներքին և երեխայոց հիւ. և ծաղկահատ.:
ԿԻՆ-ԲԺԻՇԿ ԱՄԲՐՈՒՄՕՎԱ-ՄԵԼԻՔԵԱՆ — 1—2 ժ. մանկաբարձութիւն և կանանց հիւ.:
ԵՐԵԿՈՆԵՐԸ՝
Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—6—7 ժ.:
Վճարը 50 կ.: Չքաւորները ձրի: Համախորհրդի (կօնսիլիում) և օպերացիայի համար առանձին:
Հիւանդանոցի վարչութիւն՝
Բժշկապետ Բ. Նաւասարդեան
1. 0—72

Լոյս տեսաւ
ԱՇՈՒՂ ՋԱՄԱԼՈՒ
Բիւրդ օղլու հէքիաթը
հանդերձ երգերով:
Գինն է 25 կոպ
Պահեստը՝ Թիֆլիս, Աղանեան տպարանում:
544. 1—1

ՀԱՐԿԱՒՈՐ Է
յաջողակ ձայն ունեցող և ժամակարգութեան հմուտ **տիրացու**, որը նաև կունենայ դասեր դպրոցում: Պահանջվում է կրթական ցենզ ոչ պակաս քան թեմական դպրոցի Դ. դասարանի: Դիմել՝ Петровскъ, Дагестанской обл., Армянскому церковно-приходскому Попечительству.
(հ.կ.) 547. 4—1

ԱԽԱԼՔԱԼԱՔԻ
հայոց եկեղ.-ծխական երկդ. երկսեռ դպրոցի համար հարկաւոր են
ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐ և ՈՒՍՈՒՑՉՈՒՀԻ
հայոց և ռուսաց լեզուների, հայոց և ռուսաց պատմութիւնների, ռուսաց և ընդհանուր աշխարհագրութիւնների, բնագիտութեան, հայրենագիտութեան, ձեռագործի, երկրաչափական ձևագիտութեան և գծագրութեան համար: Պայմանների մասին դիմել՝ Городъ Ахалкалаки (Тифл. губ.), Попечительству Арм. церков.-прих. школы.
(ա.օ.) 545. 3—1

Թիֆլիսի Գայիանեան Օրիորդաց Դպրոցի
համար հարկաւոր է մասնագէտ
ՈՒՍՈՒՑԻՉ կամ **ՈՒՍՈՒՑՉՈՒՀԻ**
ռուսաց լեզուի և ռուսաց գրականութեան համար՝ 5-րդ և 6-րդ (ուսմ. VIII և IX տ. դասարաններում շաբաթական 14 դասով: Դիմել դպրոցի հերթապահ հոգաբարձու՝ բժ. Տ. Թադէոսեանին մինչև օգոստոսի 15-ը: Հասցէն՝ Веляминовская № 4.
(չ.ու.) 534 3—3

ՕԴԵՍՍԱՅԻ
հայոց ծխակ. միդասեան դպրոցի համար
ՀԱՐԿԱՒՈՐ Է
Մի ցենզաւոր ուսուցիչ
հայոց լեզուի, գրագիտութեան և երգեցողութեան համար, շաբաթական 17—18 դասով. ռոճիկը 30 ր. ամսական, բնակարան միայն մի սենեակ և վառելիք: Ցանկացողները պէտք է ուղարկեն ուսման և ըստ կարելոյն ուսուցչական վկայականները կամ նրանց պատճէնները: Դիմել անյապաղ Одесса, свящ. О. Чубарьяну. Екатерининская 69.
(ա.օ.) 539. 5—4

ՆԵՐՍԻՍԵԱՆԱՒԱՐՏ ուսուցիչ 6 տարվայ փորձ. (աւարտած նաև քաղ. դպրոցը) և ԳԻՄՆԱԶԻԱՒԱՐՏ ուսուցչուհի 3 տարվ. փորձ. (անցել է տեսակ. մանկավ.)
ԱՄՈՒՍԻՆՆԵՐ
ցանկանում են պաշտօնավարել Թիֆլիսի կամ գաւառական ծխ. դպրոցներից մէկում: Երկուսն էլ հմուտ են պետական լեզուին: Ուսուցիչը իբրև փորձված դիլետանտ կարող է քառաձայն խումբ կազմել եկեղեցու համերգների համար:
Հրաւէր ընդունելու դէպքում դօկումենտները անյապաղ կուղարկվեն պօստով: Պայմանների մասին դիմել՝ Тифлисъ, Бебутовская, 44, кв. 1. Учителю Георгію Меликянцу. (ու.ե.) 523. 6—3

„ՄՇԱԿԻ" ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ
Վաճառվում են հետևեալ հրատարակութիւններից

1) ԳՐ. ԱՐԾՐՈՒՆՈՒ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ, հատոր I	գ. 1 ր. —
2) ՄԱՆՐԱՆԿԱՐՆԵՐ, Վրձինի, I և II հատորներ	1 ր. 50
3) ՏԱՍՆ ԵՒ ԵՐԿՈՒ ՊԱՏՄՈՒԱԾՔ, Շահրիարի	— 50 կ.
4) ԵՐԿԱՍԻՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԱՌԱՋԻՆ ՆԱՊՈՒԿ Քամալեանց Ս-ի.	— 50 կ.
5) ՋՀՈՒԴ-ՔՈՒՇԱՆ, վէպ Պարսկաստանի կեանքից, Շահրիարի	1 ր. — կ.
6) ՄԻ ԱՄԻՍ ԱՐԵՒԵԼՔՈՒՄ, Հ. Առաքելեանի	— 40 կ.
7) ԻՆՆՍՈՒՆ ԵՐԵՔԸ, մեծ վէպ Վ. Հիւգոյի, Թարգմ. Արշակ Սաֆարեանի	1 ր. 50 կ.
8) ՀԱՅՐԵՆԱՋՈՒՐԿ, Ե. Սպիրիի, Թարգմ. գերմ. Իս. Յարութիւնեանի,	— 50 կ.
9) ՈՒՐԱՆԻԱ, աստղագիտական վէպ Կամիլ Ֆլամարիոնի. Թ. Հ. Առաքելեանի	1 ր. 50
10) ՀԱՅԿԱԿԱՆ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ, Լէօի, հատոր I, երկրորդ տպ.	1 ր. 20 կ.
11) ԴԵՊԻ ԱՐԱՐԱՏ, Արշ. Մխիթարեանի	— 40 կ.
12) ՀԱՅՐԵՆԻ ՀՈՂԸ, վէպ Հանրի Բորդոյի, Թարգմ. Հ. Առաքելեանի	— 60 կ.
13) ՏՆԱՅԻՆ ԲԺՇԿԱՐԱՆ, բժշկպ. Գ. Բաբեանի	
I հատոր, Բնախօսութիւն եւ անդամազննութիւն	1 ր. —
II » Հիւանդութիւններ (վարակիչ, ներքին, կաշուի), դեղարան, բառարան	1 ր. 60 կ.
14) ՔՆՆԱՐԿ տրամաբանութեան, հոգեբանութեան, բանահիւսութեան, Հ. Առաքելեանի	— 50
15) ՀԱՍԱՐԱԿՈՒԹԵԱՆ ՆԵՑՈՒԿՆԵՐԸ, Հ. Իբսէնի, Թարգմ. Լ. Բաքայեանի	— 50
16) ՔՍԱՆ ՎԷՊԻԿՆԵՐ, Գի դը Մօպասանի, Թարգմ. Հ. Առաքելեանի	1 ր. —
17) ՆՈՐ ԿԵԱՆՔԻ ՇԵՄՔՈՒՄ, դրամ. էտիւդ գաւառ. կեանքից, Ա. Բ.-ի	— 40 կ.
18) ՆՇԱՆՎԱԾՆԵՐ, պիէս 3 գործ., Ալ. Աբէլեանի	— 60 կ.
19) ԷԴՄՕՆՏ, ողբերգ. 5 գործ. Վ. Գ. Գեօթէի, Թարգմ. Հմ. Մաժինեանի	— 50
20) ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԻՒՆԸ, Լ. Ն. Տոլստոյի, Թարգմ. Սուրխաթեանի	— 30
21) ԿՈՆՖՈՒՑԻՈՍ (Չինական իմաստունը), Լ. Ն. Տոլստոյի խմբագրութեամբ կազմեց Ա. Բուլանժէ, Թարգմ. Սուրխաթեանի	— 7 կ.
22) ԱՍԱՑՈՒԱԾՔՆԵՐ ՄԱՀՈՄԵԴԻ, ընտրված Լ. Տոլստոյի, Թ. Լ. Դանիէլեանի	— 5 կ.
23) ՔՈՅՐԵՐԸ, Լ. Տոլստոյի, Թարգմ. Լ. Դանիէլեանի	— 5 կ.
24) ԻՆՉՈ՞Վ ԵՆ ԿԵՆԴԱՆԻ ՄԱՐԴԻԿ, Լ. Տոլստոյի, Թարգմ. Լ. Դանիէլեանի	— 10 կ.
25) ՇԵՔՍՊԻՐ ԵՒ ԻՐ «ՀԱՄԼԷՏ» ՈՂԲԵՐԳՈՒԹԵԱՆ ԱՂԲԻՒՐՆ ՈՒ ՔՆՆԱԴԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ, Պետրոս Ադամեանի	1 ր. —
26) ՅՈՒՇԱՐՁԱՆ ողբացեալ Արփիար Արփիարեանի	— 40 կ.
27) ՄԻ ՀՆՋԻՒՆԻ ՄԻ ԳԻՐ (վիպագրութիւն), Ստ. Մալխասեանցի	— 20 կ.
28) ԸՆԿԵՐՎԱՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՀԱՅ ԸՆԿԵՐՎԱՐԱԿԱՆՆԵՐ, Մուշեղ եպիսկոպոսի	— 35 կ.
29) ՃՈՐՏԵՐԻ ԱԶԱՏԱԳՐՈՒԹԵԱՆ ՅԻՍՆԱՄԵԱԿԸ, նկարներով	— 15 կ.
30) ԱՆԳԼԻԱՅԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԵԱՆՔԸ, Թարգմ. Մ.-ի	— 15 կ.
31) ՃԱՊՈՆԻԱ կամ ծագող Արեգակի երկիրը, Գ. Ի. Շրէյդէրի	— 25 կ.
32) ՄԻԼՏՈՆԻ ԿԵԱՆՔԸ եւ գրական գործունէութիւնը, Հ. Առաքելեանի	— 30 կ.
33) ԳԱԼԻԼԷՅԻ ԿԵԱՆՔԸ եւ գիտական գործունէութիւնը, Հ. Առաքելեանի	— 25 կ.
34) ԱՍՏՈՒԱԾԱՅԻՆ ՀՐԱՀԱՆԳ ՀԱՆՐԱՊԱՐՏՈՒԹ, Մակ. եպ. Բարխուտարեանի	— 80 կ.

Վերոյիշեալ 35 կտոր գրքերը, որոնց ընդհանուր արժէքն է 20 ր. 62 կ., վաճառվում են հետևեալ պայմաններով:
Նրանք, որոնք կը դիմեն մեզ՝ պահանջելով վերոյիշեալ գրքերից 5 րուբլուց բարձր գումարի՝ կը ստանան 25% զեղջ: 10 ր. բարձր գումարի պատուէր տուողներն ստանում են 30% զեղջ:
«Մշակի» բաժանորդներից նրանք, որոնք վերոյիշեալ բոլոր գրքերից մի-մի օրինակ կը պահանջեն, կը ստանան 40% զեղջ:
ՃԱՆԱՊԱՐՀԱԾԱԽՍԸ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ՎՐԱ: 50—35

Типографія канцеляріи Намѣстника Его Императорскаго Величества на Кавказѣ Лорисъ-Меликовская улица, домъ казенный.